Միավորված ազգերի
կազմակերպություն

A/HRC/31/62

Գլխավոր ասամբլեա

Տարածում՝ Ընդհանուր
2016թ. հունվարի 12

Բնօրինակի լեզու՝ անգլերեն

Մարդու իրավունքների խորհուրդ
Նիստ՝ երեսուն մեկ
Օրակարգի կետ՝ 3

Բոլոր մարդու իրավունքների՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների, այդ թվում՝ զարգացման իրավունքի խթանում ու պաշտպանություն

Հատուկ զեկուցողի զեկույցը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին

Քարտուղարության նշում

Մարդու իրավունքների խորհրդի թիվ 26/20 բանաձևին համապատասխան Խորհուրդ ներկայացված իր զեկույցում Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցողն ամփոփում է 2015 թվականի մարտից ի վեր ձեռնարկված գործողությունները և հաշմանդամություն ունեցող անձանց՝ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունքի թեմատիկ ուսումնասիրությունը:

GE.16-00346(E)
1600346

Please recycle

Հատուկ զեկուցողի զեկույցը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին

Բովանդակություն

		Էջ
I.	Ներածություն	3
II.	Հատուկ զեկուցողի գործողությունները	3
	Ա. Այցեր ՄԱԿ-ի անդամ պետություններ	3
	Բ. Համաժողովներ, ժողովներ և շահագրգիռ անձանց հետ տարվող գործունեություն	3
	Գ. Հաղորդակցություններ	5
III.	Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին	5
	Ա. Մասնակցության սկզբունքը	5
	Բ. Քվեարկելու և ընտրվելու իրավունք	9
	Գ. Պետական ծառայության մտնելու իրավունք	9
	Դ. Պետական գործերի վարմանը մասնակցելու իրավունք	10
IV.	Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացում	11
	Ա. Արդյունավետ և իմաստալից մասնակցության կարևորությունը	11
	Բ. Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների մասնակցության ապահովում	12
	Գ. Հաշմանդամություն ունեցող անձանց համար խորհրդակցությունների կազմակերպման և նրանց ակտիվ ներգրավվածության խթանում	24
	Դ. Մասնակցության հիմնական ոլորտներ	30
V.	Եզրակացություններ և հանձնարարականներ.	35

I. Ներածություն

1. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցող Կատալինա Դևանդասը սույն հաշվետվությունը ներկայացրել է Մարդու իրավունքների խորհուրդ՝ Խորհրդի թիվ 26/20 բանաձևին համապատասխան: Զեկույցում ներկայացվում են 2015 թվականի մարտից ի վեր ձեռնարկված գործողությունները և հաշմանդամություն ունեցող անձանց՝ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունքի թեմատիկ ուսումնասիրությունը: Սույն զեկույցը պատրաստելու ընթացքում Հատուկ զեկուցողը վերլուծել է անդամ պետություններին, մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատություններին, Միավորված ազգերի կազմակերպության համակարգի գործակալություններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպություններին ուղարկված հարցաշարի պատասխանները: 2015թ. դեկտեմբերի 22-ի դրությամբ նա ստացել է 144 պատասխան:[1]

II. Հատուկ զեկուցողի գործողությունները

Ա. Այցեր ՄԱԿ-ի անդամ պետություններ

2. 2015 թվականին Հատուկ զեկուցողը սեպտեմբերի 10-17-ն ընկած ժամանակահատվածում այցելել է Մոլդովայի Հանրապետություն (տե՛ս՝ A/HRC/31/62/Add.1) և Պարագվայ՝ նոյեմբերի 19-27-ը (զեկույցը կներկայացվի Խորհրդի երեսունչորսերորդ նիստին): Նա շնորհակալություն է հայտնել նշված պետությունների կառավարություններին այցերից առաջ և այցերի ընթացքում նրանց համագործակցության համար:

3. Հատուկ զեկուցողը համաձայնել է այցելել Մարոկկո և Զամբիա 2016 թվականի ընթացքում և Ֆրանսիա և Ինդոնեզիա այցելելու հայց է ներկայացրել:

Բ. Համաժողովներ, ժողովներ և շահագրգիռ անձանց հետ տարվող գործունեություն

4. Հատուկ զեկուցողը մասնակցել է բազում համաժողովների և փորձագետների ժողովների, ինչի արդյունքում կարողացել է փոխանակել տեղեկություններ, կիսվել լավագույն գործելակերպով և բարձրացնել հաշմանդամության հետ կապված հարցերի շուրջ իրազեկության մակարդակը: 2015 թվականի մարտին և ապրիլին նա մասնակցել է Մարդու իրավունքների խորհրդի ամենամյա փոխներգործուն (ինտերակտիվ) քննարկմանը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով հանձնաժողովի կազմակերպած ներառական կրթության շուրջ համընդհանուր քննարկմանը նվիրված օրվա միջոցառումներին: Տարվա ընթացքում նա մասնակցել է 2016

[1] Տե՛ս՝ www.ohchr.org/EN/Issues/Disability/SRDisabilities/Pages/DecisionMaking.aspx

թվականի Մարդասիրության համաշխարհային գագաթաժողովի նախապատրաստական գործընթացին և ղեկավարել է հաշմանդամության ներառման հարցերով նիստը Ժնևում կայացած համապատասխան համաշխարհային խորհրդակցության շրջանակներում:

5. 2015 թվականի մայիսին Հատուկ զեկուցողը ոչ պաշտոնական այցով մեկնել է Հելսինկի՝ Ֆինլանդիայի Արտաքին գործերի նախարարության հրավերով՝ քննարկելու իր լիազորության շրջանակներում համագործակցությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և խրախուսման գործում ներգրավված դերակատարների լայն շրջանակի հետ: Նույն ամսում նա մասնակցել է նաև Եվրամիության Լատվիայի նախագահության կողմից կազմակերպված հաշմանդամության հարցերով բարձր մակարդակի ժողովին:

6. 2015 թվականի հունիսի Հատուկ զեկուցողը մասնակցել է Նյու-Յորքում կայացած Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի հարցերով մասնակից պետությունների ութերորդ ամենամյա համաժողովին և դրան զուգահեռ անցկացվող միջոցառումներին: Նա ակտիվորեն մասնակցել է Կայուն զարգացման նպատակների հաստատմանը նախորդող գործընթացի վերջին փուլերին: Նա ջատագովական գործունեություն է իրականացրել Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ ավելի շատ հանձնարարականներ ներառելու և նման անձանց առնչությամբ Կայուն զարգացման նպատակների իրականացման գործընթացը գնահատելու ցուցանիշներ ընդունելու ուղղությամբ:

7. 2015 թվականի սեպտեմբերին Յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքի հարցերով հատուկ զեկուցողի հետ մեկտեղ՝ նա անցկացրել է փորձագիտական ժողով հաշմանդամության պատճառով ազատազրկված անձանց խնդիրների վերաբերյալ: Ժողովին ամփոփվել են փաստացի կամ ենթադրյալ հաշմանդամության հիմքերով կամայական կալանքի առկա ձևերը՝ վերահաստատելով նշված գործելակերպի բացարձակ արգելքը: Փորձագետներն ընդունել են առկա գործելակերպին այնպիսի նոր այլընտրանքներ գտնելու անհրաժեշտությունը, որոնք հաշվի կառնեն հաշմանդամություն ունեցող անձանց մարդկային արժանապատվությունը և անձի անձեռնմխելիությունը:

8. 2015թ. հոկտեմբերի 27-ին նա Գլխավոր ասամբլեա է ներկայացրել իր տարեկան զեկույցը (A/70/297) հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության իրավունքի վերաբերյալ: Զեկույցը պատրաստելու համար նա լայնածավալ խորհրդակցություններ է ունեցել նշված թեմայի շուրջ, ի թիվս այլոց՝ զանազան փորձագիտական ժողովների միջոցով: Զեկույցը հասանելի է դարձել մատչելի ձևաչափերով: Բացի այդ, նա հանդիպել է Գլխավոր քարտուղարին՝ հաշմանդամություն ունեցող անձանց Միավորված ազգերի կազմակերպության համակարգում առավել արդյունավետ եղանակով ներառելու հարցը քննարկելու համար: Հոկտեմբերին նա մասնակցել է նաև Լիմայում կայացած Համաշխարհային բանկի ամենամյա ժողովներին և դրանց առնչվող մի քանի միջոցառումներին:

9. 2015թ. դեկտեմբերի 3-ին Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրը նշելու համար՝ Հատուկ զեկուցողը ՄԱԿ-ի այլ փորձագետների,

ՄԱԿ-ի գործակալությունների և հաշմանդամություն ունեցող անձանց շահերի պաշտպանող կազմակերպությունների հետ մեկտեղ Ժնևում կազմակերպել է իրազեկության մակարդակի բարձրացման մի քանի միջոցառում:

10. Իր նշանակումից ի վեր Հատուկ զեկուցողը կապ է հաստատել հատուկ ընթացակարգային լիազորություններ ունեցող այլ կառույցների և ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների հետ՝ նրանց գործունեությունը համակարգելու և իրենց աշխատանքում հաշմանդամության հարցերի ներառումը խրախուսելու նպատակով: Նշված համագործակցության շրջանակներում նա աշխատել է հետևյալ անձանց և կառույցների հետ՝ Հաշմանդամության և մատչելիության հարցերով գլխավոր քարտուղարի հատուկ հանձնարարություններով ներկայացուցիչ, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության խրախուսման հարցերով Միավորված ազգերի կազմակերպության գործընկերություն, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, Երեխաների իրավունքների հարցերով կոմիտե, Կրթության իրավունքի հարցերով հատուկ զեկուցող, Առողջության իրավունքի հարցերով հատուկ զեկուցող, բնիկ ժողովուրդների իրավունքների հարցերով հատուկ զեկուցող, մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և երեխաների պոռնոգրաֆիայի հարցերով հատուկ զեկուցող, Տարեցների՝ բոլոր մարդու իրավունքներից օգտվելու հարցերով անկախ փորձագետ, Լսնամաշկությամբ (ալբինիզմ) տառապող անձանց՝ մարդու իրավունքներից օգտվելու հարցերով անկախ փորձագետ և Օրենքով և գործնականում կանանց նկատմամբ խտրականության հարցերով աշխատանքային խումբ:

11. Նա խորհրդակցություններ է անցկացրել նաև այլ շահագրգիռ կողմերի հետ, այդ թվում՝ Հակահետևակային ականների կիրառման, կուտակման, արտադրության ու տեղափոխման արգելման և դրանց ոչնչացման մասին կոնվենցիայի Տուժածների աջակցության կոմիտե, Կարմիր խաչի միջազգային կոմիտե, ազգային իրավապաշտպան կառույցների ներկայացուցիչներ, հաշմանդամություն ունեցող բազում անձինք և նրանց շահերը ներկայացնող կազմակերպություններ, այլ հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ), գիտնականներ և դեսպաններ:

Գ. Հաղորդակցություններ

12. Սույն զեկույցի ժամանակահատվածում ուղարկված հաղորդակցությունների և ստացված պատասխանների համառոտագրերը ներկայացվում են հատուկ ընթացակարգերի հաղորդակցությունների զեկույցներում (տե՛ս՝ A/HRC/29/50 և A/HRC/30/27):

III. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին

Ա. Մասնակցության սկզբունքը

13. Քաղաքական և հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացին մասնակցությունը հանդիսանում է մարդու

իրավունքների պաշտպանության առանցքային սկզբունքը, ինչպես նաև՝ ժողովրդավարական պետության կայացման հիմնական նախապայմանը: Մասնակցությունը հնարավորություն է ընձեռում անհատներին էական դերակատարում ունենալ ինչպես իրենց, այնպես էլ իրենց համայնքների զարգացման գործում: Մարդիկ իրավունք ունեն մասնակցելու իրենց կյանքի վրա ազդեցություն գործող, այդ թվում՝ իրենց իրավունքներին առնչվող որոշումների կայացման գործընթացին: Տարբեր խմբերի, այդ թվում՝ կանանց, երեխաների, տարեցների, բնիկ ժողովուրդների և հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ և իրազեկ մասնակցությունը հանդիսանում է մարդու իրավունքների պաշտպանության վրա հիմնված մոտեցմանը ոչ միայն համահունչ պայմանը, այլև՝ անհրաժեշտ պայմանը:[2] Այն ապահովում է ակտիվ քաղաքացիական դիրքորոշման, արդյունավետ կառավարման և սոցիալական հաշվետվողականության կայացումը:

14. Որոշումների կայացման գործընթացին մասնակցությունը ամրագրված է միջազգային իրավունքի սկզբունքներով: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով սահմանվում է, որ յուրաքանչյուր ոք ունի անմիջականորեն կամ ազատ ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունք, ինչպես նաև իր երկրում պետական ծառայության մտնելու հավասար հնարավորության իրավունք (Հոդված 21): Պետական գործերին հավասար մասնակցության իրավունքով մասնակցության սկզբունքը, քվեարկելու և ընտրվելու իրավունքը և հավասարության ընդհանուր պայմաններով պետական ծառայության մտնելու իրավունքը վերահաստատվում են նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով (Հոդված 25): Այնուհետև մասնակցության իրավունքը որպես սկզբունք և մարդու իրավունք ամրագրվել է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային և տարածաշրջանային այլ փաստաթղթերում, այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում:[3]

15. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում հասարակական կյանքին մասնակցությունը դիտարկվում է որպես բազմահատվածային հարց: Այսպես, հասարակական կյանքին

[2] ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳՀԳ), *Principles and Guidelines for a Human Rights Approach to Poverty Reduction Strategies («Աղքատության հաղթահարման ռազմավարությունների նկատմամբ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցման սկզբունքները և ուղենիշները»)*, կետ 64:

[3] Այս իրավունքը ճանաչված է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում (Հոդված 25), Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայով (Հոդված 5 (գ)), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայով (Հոդված 7), Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայով (Հոդված 12 և 23-րդ հոդվածի 1-ին կետ) և Բոլոր միգրանտ աշխատողների եւ նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության միջազգային կոնվենցիայով (41-րդ հոդվածի 1-ին կետ և 42-րդ հոդվածի 2-րդ կետ): Տարածաշրջանային փաստաթղթերի շարքին են դասվում՝ Եվրոպական Միության հիմնարար իրավունքների խարտիան (Հոդվածներ 39 և 40), Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա) կից թիվ 1 արձանագրությունը (Հոդված 3), Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան (Հոդված 13), Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան (Հոդված 23) և Տարեցների մարդու իրավունքների պաշտպանության միջամերիկյան կոնվենցիան (Հոդված 27):

մասնակցությունը ներառված է Կոնվենցիայի Նախաբանում և Նպատակի բաժնում (Հոդված 1), և ճանաչվում է որպես ընդհանուր սկզբունք (Հոդված 3) և հիմնարար քաղաքական իրավունք (Հոդված 29): Կոնվենցիայի համաձայն՝ հասարակական կյանքին մասնակցությունն ակնհայտորեն առնչվում է հետևյալ իրավունքներին՝ անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունք (Հոդված 19), ներառական կրթություն (Հոդված 24), բուժում ու վերականգնում (Հոդված 26) և մասնակցություն մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին (Հոդված 30): Մասնակցության հայեցակարգն ընդգրկված է նաև Հաշմանդամություն ունեցող երեխաներին առնչվող հոդվածում (Հոդված 7), ինչպես նաև՝ մասնակցության նախադրյալները սահմանող հոդվածներում, օրինակ՝ Մատչելիություն (Հոդված 9) և Խոսքի ու կարծիքի ազատությունը և տեղեկատվության մատչելիությունը (Հոդված 21): Բացի այդ, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի հետևյալ հոդվածներում կարևորվում է նաև մասնակցության նշանակությունը՝ Կոնվենցիայի կիրարկման և վերահսկողության մեխանիզմներին առնչվող հոդվածներ (Հոդվածներ 4, 33, 34 և 35) և միջազգային համագործակցությանն առնչվող հոդված (Հոդված 32):

16. Հասարակական կյանքին արդյունավետ և բովանդակալից մասնակցությունը կազմում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի հիմքը: Այս մասին է վկայում Կոնվենցիայի մշակման և դրա շուրջ բանակցությունների գործընթացներում քաղաքացիական հասարակության, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների աննախադեպ ներգրավումը: Քննարկումների մեկնարկից ի վեր Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և արժանապատվությունը պաշտպանող և ապահովող ամբողջական և միասնական միջազգային կոնվենցիայի Հատուկ կոմիտեին խրախուսել էին ընդունել այնպիսի աշխատանքային մեթոդներ, որոնք համապատասխան ՀԿ-ներին կընձեռեն իր քննարկումներին լիարժեքորեն մասնակցելու հնարավորություն:[4] Այս առումով ուշագրավ ընթացակարգային նորարարությունը կայանում էր նրանում, որ Հատուկ կոմիտեն ՀԿ-ների ներկայացուցիչներին թույլ էր տալիս ելույթ ունենալ իր բոլոր հանրային ժողովներին,[5] և ոչ պաշտոնական և փակ ժողովներին:[6] Բացի այդ, Հատուկ կոմիտեի՝ Կոնվենցիայի տեքստը կազմելու համար պատասխանատու Աշխատանքային խմբում ընդգրկվել է ՀԿ-ների 12 ներկայացուցիչ, ում նշանակել են հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները և դրանց աջակիցները:[7] Գլխավոր ասամբլեան անդամ պետություններին խրախուսել է հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունները ներգրավել Հատուկ կոմիտեի աշխատանքին նպաստող նախապատրաստական գործընթացներում և իրենց պաշտոնական պատվիրակությունների կազմում:[8] Այս առումով կարևոր է նշել,

[4] Տե՛ս՝ Մարդու իրավունքների հանձնաժողովի թիվ 2002/61 բանաձև:
[5] See www.un.org/esa/socdev/enable/rights/adhoca57357e.htm
[6] See www.un.org/esa/socdev/enable/rights/ahc4reporte.htm
[7] See www.un.org/esa/socdev/enable/rights/a_58_118_e.htm
[8] Գլխավոր ասամբլեայի թիվ 57/229 բանաձև, կետեր՝ 12 և 13:

որ ՀԿ-ները ստացել են բավարար աջակցություն և ֆինանսավորում, որպեսզի կարողանան մասնակցել բանակցություններին:[9]

17. Նման մասնակցային գործընթացները դրական ազդեցություն են ունեցել կոնվենցիայի որակի և հաշմանդամություն ունեցող անձանց դրա վերաբերելիության վրա: Ավելին, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի շրջանակներում հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց լիարժեք և արդյունավետ մասնակցությանը տրվող կարևորությունն ազդարարում է մարդու իրավունքների միջազգային իրավունքի սկզբունքներում մեծ հարացուցային փոփոխությունը, որով հաշմանդամություն ունեցող անձինք հանդիսանում են ոչ թե հոգատարության կարիք ունեցող «օբյեկտներ», այլ՝ ուրիշների հետ հավասար հիմունքներով մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից օգտվող «սուբյեկտներ»:[10]

Թեև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային նախորդած մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական միջազգային փաստաթղթերով արդեն իսկ ճանաչվել էր հաշմանդամություն ունեցող անձանց և մյուսների հավասարությունը, նախքան Կոնվենցիայի ընդունումը նման փաստաթղթերով ամրագրված իրավական պարտավորությունները հազվադեպ են կիրառվել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները խրախուսելու համար:[11] Ավելին, հաշմանդամություն ունեցող անձինք բախվել են հասարակական կյանքին մասնակցության հետ կապված լուրջ խոչընդոտների, և նրանց տեսակետները հաճախ անտեսվել են հօգուտ «հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանության կազմակերպությունների» և «փորձագետների» այլ խմբերի տեսակետների:

18. Թեև քաղաքական և հասարակական կյանքին մասնակցությունը ենթադրում է հատուկ իրավունքների մի ամբողջ ցանց, օրինակ՝ քվեարկելու և ընտրվելու իրավունք, հանրային ծառայություններից օգտվելու իրավունք և պետական գործերի վարմանը մասնակցելու իրավունք, հաշմանդամություն ունեցող անձանց պետական գործերին մասնակցությանը նշանակալիորեն նպաստում են նաև այլ մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, օրինակ՝ ազատ արտահայտվելու իրավունքը կամ միավորումներ կազմելու և խաղաղ հավաքների ազատության իրավունքը: Նման իրավունքները հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպություններին հնարավորություն են տալիս հասնել փոփոխությունների խաղաղ և օրինական ճանապարհով ժողովրդավարական

[9] Տե՛ս՝ A/AC.265/2004/3:

[10] Gerard Quinn, “Resisting the temptation of elegance” (Ջերարդ Քուին), *UN Convention on the Rights of Persons with Disabilities: European and Scandinavian Perspectives*, Oddný Mjöll Arnardóttir and Gerard Quinn (*«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա. Եվրոպական և սկանդինավյան հեռանկարներ»* Օդդնի Մջյոլ Արնարդոթիրի և Ջերարդ Քուինի խմբագրությամբ), էջ՝ 216:

[11] Տե՛ս՝ Gerard Quinn and Theresia Degener, *Human Rights and Disability: The Current Use and Future Potential of United Nations Human Rights Instruments in the Context of Disability* (Ջերարդ Քուին և Թերեզիա Դեգեներ. *«Մարդու իրավունքները և հաշմանդամությունը. հաշմանդամության համատեքստում Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերի ներկա կիրառումը և հետագա կիրառման հնարավորությունը*) Միավորված ազգերի կազմակերպություն, 2002թ.:

գործընթացի միջոցով:[12] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով հաշմանդամություն ունեցող անձանց՝ որոշումների կայացման գործընթացին մասնակցության նշանակությունն ընդլայնվել է՝ անցնելով քաղաքական իրավունքների շրջանակից և ապահովելով նրանց կողմից իրենց առնչվող բոլոր հարցերի շուրջ կարծիք արտահայտելու հնարավորությունը:

Բ. Քվեարկելու և ընտրվելու իրավունք

19. Հաշմանդամություն ունեցող անձինք պետք է ունենան մյուսների հետ հավասար հիմունքներով քվեարկելու և ընտրվելու իրավունք: Ոչ ոք չպետք է կաշկանդված լինի հաշմանդամության հիմքով օրենքով կամ գործնականում՝ իր քաղաքական իրավունքներից օգտվելու հարցում: Պետությունները պետք է երաշխավորեն հաշմանդամություն ունեցող անձանց՝ քվեարկելու և ընտրվելու իրավունքը՝ այդ թվում՝ ապահովելով ընտրական գործընթացի, քվեարկության վայրի և նյութերի համապատասխանությունը, մատչելիությունը և դյուրընկալությունը և օգտագործումը, ինչպես նաև դյուրացնելով օժանդակ և նոր տեխնոլոգիաների կիրառումը: Պետությունները պետք է նաև երաշխավորեն, որ գաղտնի քվեարկությունն իրականացվի առանց ահաբեկման, այդ թվում՝ անձի խնդրանքով՝ իր ընտրած որևէ այլ անձի օգնությամբ:

20. Ամբողջ աշխարհում հաշմանդամություն ունեցող անձինք բախվում են խտրականության բազում դրսևորումների, որոնք խանգարում են նրանց իրականացնել քվեարկելու և (կամ) ընտրվելու իրենց իրավունքները: Քվեարկության գործընթացների անմատչելիությունը խոչընդոտում է հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունն ընտրություններին: Գործունակության մերժումը կամ սահմանափակումը հաճախ հանգեցնում է հաշմանդամություն ունեցող որոշ անձանց քաղաքական իրավունքների և մասնավորապես՝ քվեարկելու իրավունքի ժխտմանը:[13] Նմանապես, հոգեբուժարանում կամ սոցիալական հաստատությունում գտնվելը շատ դեպքերում խոչընդոտում է հաշմանդամություն ունեցող անձանց իրացնել իրենց ընտրելու իրավունքը:

Գ. Պետական ծառայության մտնելու իրավունք

21. Պետությունները պետք է սահմանեն հաշմանդամություն ունեցող անձանց համար ուղղակի կամ անուղղակի խտրականություն չդնող պետական ծառայության պաշտոնները.[14] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային համապատասխան՝ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, ներառյալ՝ ողջամիտ պայմանների և աջակցության տրամադրումը՝ հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով պետական պաշտոն

[12] Նույն տեղում, էջ՝ 21:

[13] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների կոմիտե, թիվ 1 ընդհանուր մեկնաբանություն (2014թ.) օրենքի առջև հավասարության վերաբերյալ, կետ 48:

[14] Մարդու իրավունքների կոմիտե, թիվ 25 մեկնաբանություն (1996թ.) պետական գործերին մասնակցության և քվեարկելու իրավունքի վերաբերյալ, կետ 23:

զբաղեցնելիս արդյունավետ գործունեություն ծավալելու և կառավարության ցանկացած մակարդակով ցանկացած պետական գործառույթ կատարելու իրավունքը և հնարավորությունը երաշխավորելու համար: Պետությունները պետք է նաև ապահովեն, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք չհեռացվեն պետական ծառայության պաշտոններից նրանց համար աշխատանքի ընդունման ընթացակարգերի, պետական շենքերի կամ ծառայությունների անհասանելիության պատճառով: Ավելին, պետությունները պետք է ձեռնարկեն պետական ծառայության պաշտոններ զբաղեցնելու հարցում հաշմանդամություն ունեցող անձանց փաստացի հավասարություն հաստատելու գործընթացն արագացնելու և դրան հասնելու համար անհրաժեշտ հատուկ միջոցառումները (Հոդված 5) և ընդունեն համապատասխան քաղաքականություն ու միջոցներ ձեռնարկեն պետական հատվածում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունն ապահովելու համար:

Դ. Պետական գործերի վարմանը մասնակցելու իրավունք

22. Հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն մասնակցելու պետական գործերի վարմանը: Դա լայնաբովանդակ հասկացություն է, որը ներառում է պետական կառավարման և քաղաքականության մշակման բոլոր կողմերը և առնչվում է քաղաքական իշխանության, այդ թվում՝ օրենսդիր, գործադիր և վարչական իշխանության իրականացմանը: Այն ներառում է նաև մասնակցությունը հանրային քննարկումներին և երկխոսությանը, ինչպես նաև խաղաղ ցույցերին և ժողովներին:[15]

23. Հաշմանդամություն ունեցող անձինք կարող են մասնակցել պետական գործերի վարմանը ինչպես ուղղակիորեն, այնպես էլ անուղղակիորեն: Ուղղակի մասնակցությունը ենթադրում է հասարակական կյանքին առնչվող որոշումներ կայացնելը հանրաքվեի կամ այլ ընտրական գործընթացի միջոցով, ինչպես նաև մասնակցությունը հանրահավաքներին և քաղաքացիների հետ հաղորդակցվելու նպատակով պետության կողմից հաստատված այլ խորհրդակցական հարթակներին:[16] Պետական գործերին անուղղակի մասնակցությունը կարող է դրսևորվել ազատ քվեարկության միջոցով ներկայացուցիչների ընտրությամբ և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) անդամակցությամբ: ՔՀԿ-ների շարքին են դասվում կամավորական հիմունքներով գործող ոչ պետական կազմակերպությունները, միությունները, ցանցերը և քաղաքացիական հասարակության անդամների կողմից ձևավորված խմբերը, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները:[17] Ուստիև, հարկ է ապահովել ինչպես անհատների, այնպես էլ խմբերի մասնակցությունը:[18]

[15] Նույն տեղում՝ կետեր 8 և 25:
[16] Նույն տեղում՝ կետ 6:
[17] Տե՛ս՝ www.who.int/civilsociety/documents/en/understanding_en.pdf
[18] Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 16 (2005թ.) տղամարդկանց և կանանց՝ բոլոր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից օգտվելու հավասար իրավունքի վերաբերյալ, կետ 37:

24. Պետությունները մարդու իրավունքների միջազգային իրավունքի շրջանակներում պարտավոր են սերտորեն խորհրդակցել հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ և ակտիվորեն ներգրավել դրանց քաղաքականության մշակման գործում: 1993 թվականին Հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունների հավասարեցման ստանդարտ կանոնների ընդունումից ի վեր միջազգային հանրությունը հետևողականորեն ընդունել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների շուրջ քաղաքականությունը պետք է մշակվի, իսկ ծրագիրը պետք է իրականացվի հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ սերտ խորհրդակցությամբ և նրանց ներգրավմամբ:[19] Ըստ այդմ՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով հստակ ամրագրված է հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների ներգրավումը և նրանց լիարժեք մասնակցությունը նշված քաղաքականության և ծրագրի իրականացմանը, ինչպես նաև նրանց որևէ իրավունքի վրա ազդեցություն գործող օրենսդրական, վարչական և այլ հարցերով որոշումների կայացման հետ կապված այլ գործընթացների մշտադիտարկմանը:

IV. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացում

Ա. Արդյունավետ և իմաստալից մասնակցության կարևորությունը

1. Մասնակցություն արդյունավետ որոշումների կայացման համար. բազմազան հեռանկարներ հանուն ավելի լավ արդյունքների

25. Բազմազանությունը հանդիսանում է մարդկային գոյության հիմնարար կողմը: Մարդկանց կյանքի փորձը ձևավորվում է տարբեր հեռանկարների հիման վրա՝ ըստ նրանց բազմակի մարդկային հատկանիշների կամ առանձնահատկությունների՝ սեռ, ռասա, մաշկի գույն, ազգություն, սեռական կողմնորոշում, լեզու, կրոն, ծագում, տարիք, հաշմանդամություն կամ որևէ այլ կարգավիճակ: Այս բազմազանությունն արտացոլվում է որոշումների կայացման ձևով, աշխատանքով և հասարակության կյանքին նրանց մասնակցությամբ: Հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են մարդկային բազմազանության մի մասը՝ թերևս մարմնավորելով բնակչության առավել տարասեռ խմբերից մեկը: Այնուամենայնիվ, չնայած տասնամյակներ շարունակ գործադրած ջանքերին՝ հաշմանդամություն ունեցող անձինք ամբողջ աշխարհում շարունակում են գործնականում բախվել խոչընդոտների որպես հասարակության հավասար անդամներ հասարակական կյանքին մասնակցելիս: Նրանք հազվադեպ են պաշտոններ զբաղեցնում Կառավարությունում, նրանց կարծիքը հազվադեպ են հաշվի առնվում և նրանց հետ, որպես կանոն, չեն

[19] Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 5 (1994թ.) հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ, կետ 14:

խորհրդակցում քաղաքականություն մշակելիս, այդ թվում՝ իրենց անմիջապես առնչվող հարցերի շուրջ որոշումներ կայացնելիս:

26. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի ընդունմանը նախորդող գործընթացից պարզ է դառնում, որ հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը կարող է հսկայական ազդեցություն ունենալ իրենց վերաբերող Կառավարության գործողությունների վրա, և արդյունքում կարող են ընդունվել ավելի բարենպաստ որոշումներ, քանի որ հաշմանդամություն ունեցող անձինք բոլորից ավելի լավ կարող են ներկայացնել իրենց կարիքները և դրանք բավարարելու համար առավել հարմար քաղաքականությունը: Նրանց մասնակցությունը երաշխավորվում է, որ պետությունների քաղաքականության և ծրագրերի մշակման հիմքում ընկած են նրանց կարիքները և նախապատվությունները: Ուստիև, որոշումների կայացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը կնպաստի որոշումների արդյունավետության մեծացմանը և ռեսուրսների օգտագործման արդարացիության աստիճանի բարձրացմանը, ինչի արդյունքում կստացվի ավելի բարենպաստ արդյունք հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց համայնքների համար:

27. Ներառական հասարակությունն այնպիսի հասարակությունն է, որտեղ գնահատում և ողջունում են բազմազանությունը և ընդունում, որ տարբեր փորձառություն, տաղանդ և հայացքներ ունեցող անհատներն իրենց հետ բերում են նոր գաղափարներ և լուծումներ: Փոխլրացնող և բազմազան հեռանկարների միջոցով հաշմանդամություն ունեցող անձինք կարող են էական ներդրում ունենալ քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործում, ինչպես նաև ստեղծել նորարարության և արդյունավետության հնարավորություններ և ավելի լավ արտացոլել քաղաքացիների բազմազան պահանջները: Բոլոր քաղաքացիների, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցությունը խրախուսող պետությունները ավելի մեծ հավանականությամբ կարող են նվազեցնել լարվածությունը՝ դրանով իսկ ամրապնդելով սոցիալական միասնությունը:[20]

2. Մասնակցություն հանուն գործելու կարողությունների և հնարավորությունների մեծացման

28. Մասնակցությունն ինքնին կարող է վերափոխող գործիք հանդիսանալ սոցիալական փոփոխության համար: Հաշմանդամություն ունեցող անձանց որոշումների կայացման գործընթացներում ներգրավելու ջանքերը կարևոր են ոչ միայն այն պատճառով, որ դրանց արդյունքում կայացվում են ավելի լավ որոշումներ և ստացվում են ավելի բարենպաստ արդյունքներ, այլև այն պատճառով, որ դրանք խթանում են գործելու կարողությունը և հնարավությունների մեծացումը: Մասնակցության միջոցով քաղաքացիները ավելի շատ են ներգրավվում հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացում, ավելի տեղեկացված են քաղաքականության մշակման վերաբերյալ և գիտեն՝ ինչպես կարող են նպաստել այս գործին: Հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացմանը մասնակցելիս

[20] Տե՛ս՝ http://archivo.cepal.org/pdfs/2007/S0700669.pdf (իսպաներեն):

հաշմանդամություն ունեցող անձինք կատարելագործում են իրենց շահերի պաշտպանության (ջատագովության) և բանակցություններ վարելու հմտությունները, որոնք հնարավորություն են ընձեռում իրենց ավելի լավ արտահայտել իրենց տեսակետները և իրականացնել իրենց ձգտումները: Որքան մեծ լինի հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը նման գործընթացներին, այնքան ավելի լսելի է դառնում նրանց ձայնը: Եվ իսկապես, սոցիալական կապիտալի աճը մեծապես պայմանավորված է մասնակցության աստիճանի աճով:[21]

29. Հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ և բովանդակալից մասնակցությունը կարող է նպաստել նաև սեփականության զգացումի առաջացմանը:[22] Սեփականության զգացումը չպետք է քաղաքացիների շրջանում մեկնաբանվի նեղ իմաստով կամ թերագնահատվի, քանի որ այն նպաստում է հասարակական աջակցության ամրապնդմանը և պետական քաղաքականության հաջող իրականացումը: Քաղաքականության մշակման բոլոր փուլերում հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ մասնակցությունը նպաստում է հասարակական կյանքին վերաբերող որոշումների առնչությամբ նրանց սեփականության և պատասխանատվության զգացումի զարգացմանը և կարող է ամրապնդել հանրության նախասիրությամբ պայմանավորված որոշումների կայացման նկատմամբ իշխանությունների հետաքրքրությունը:[23] Ըստ այդմ՝ նման մասնակցությունը կարող է նպաստել կառավարության նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը և ընդդիմադիր տրամադրությունների նվազեցմանը: Հաշմանդամություն ունեցող անձանց խմբերը նաև հնարավորություն կունենան ավելի սերտ հարաբերություններ հաստատել որոշում կայացնողների հետ և ազդեցություն գործել այլ խմբերի քարոզչական գործունեության վրա:

30. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը կարող է նաև ամրապնդել նրանց հպարտության զգացումը, քանի որ ավանդաբար նրանք կա՛մ հեռացվել են որոշումների կայացման գործընթացից, կա՛մ ունեցել են այնպիսի մասնակցություն, որը պայմաններ չի ստեղծել նրանց արդյունավետ և բովանդակալից ներգրավվածության համար: Հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացից հաշմանդամություն ունեցող անձանց մեկուսացումը մեծացնում է նրանց նկատմամբ թյուրըմբռնումը և ի վերջո հանգեցնում է նրանց՝ որպես ժողովրդավարական պետությունների հավասար անդամներ կարողությունների և իրավունքների մասին տեղեկացվածության պակասին: Նրանց բովանդակալից մասնակցությունը նպաստում է հասարակությունում բազմազանության նկատմամբ հարգանքի և աջակցության մեծացմանը, կարծրատիպերի վերացմանը և որպես խումբ նրանց ինքնության ամրապնդմանը:

31. Քանի որ հաշմանդամություն ունեցող անձինք կազմում են աշխարհի բնակչության առնվազն 15 տոկոսը, ինչը կազմում է 1 միլիարդ մարդ,[24]

[21] Տե՛ս՝ http://cprn3.library.carleton.ca/documents/12949_en.pdf

[22] Տե՛ս՝ www.msucommunitydevelopment.org/pubs/paul/Lachapelle%202008%20Ownership%20JCDS.pdf.

[23] Տե՛ս՝ http://c.ymcdn.com/sites/www.iap2.org/resource/resmgr/imported/Journal_Issue1_Irving.pdf.

[24] Առողջության համաշխարհային կազմակերպություն՝ Համաշխարհային զեկույց հաշմանդամության վերաբերյալ (*World Report on Disability)* (2011թ.), էջ՝ 29:

քաղաքականությունների և ծրագրերի իրականացման գործում նրանց մասնակցությունը կարող է մեծ ազդեցություն ունենալ պետությունների համար: Աշխատաշուկայում, կրթության, ընտանեկան կյանքի, հանգստի, մշակույթի և սպորտի ոլորտներում մյուսների հետ հավասար հիմունքներով ակտիվ մասնակցություն ունենալու նրանց կարողությունը կյանքի կոչելու համար անհրաժեշտ է հաղթահարել մի շարք աշխարհայացքային, կառուցվածքային և ֆիզիկական բազմահատվածային խոչընդոտներ: Հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավումը բոլոր հարցերում, այդ թվում՝ հաշմանդամության հետ չառնչվող գործընթացներում, ուղղակիորեն հաղթահարում է այդ խոչընդոտները և կանխում նորերի առաջացումը: Հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ ներգրավումը հստակ ուղերձ է որոշում կայացնողներին և հասարակությանը առհասարակ, որ նման անձինք ունեն իրավունքներ և ի վիճակի են մասնակցել և բովանդակալից գործունեություն ծավալել պետության բոլոր մակարդակներում:

3. Մասնակցությունը որպես արդյունավետ կառավարման բաղադրիչ

32. Աստիճանաբար ավելի է տարածվում այն գաղափարը, որ մասնակցությունը հանդիսանում է արդյունավետ կառավարման և ժողովրդավարության էական բաղադրիչը: Քաղաքացիական հասարակությունը կարևոր միջոց է հանդիսանում մասնակցության ոլորտում խոչընդոտների բախվող իր անդամների և խմբերի շահերը և ակնկալիքները պաշտպանելու համար: ՔՀԿ-ները հանդիսանում են ռազմավարական դերակատարներ, որոնք կարող են խթանել պետությունների թափանցիկությունը և հաշվետվողականությունը և խրախուսել պետություններին պայքարել անհավասարության և մեկուսացման դեմ:[25] Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը պաշտպանող կազմակերպությունները կարող են կարևոր դերակատարում ունենալ արդյունավետ կառավարման խթանման, իշխանությունների հաշվետվողականության և դրանց իրենց պահանջների բավարարման համար պատասխանատու դարձնելու, ինչպես նաև պետական կառավարման և մարդու իրավունքների պաշտպանության բարելավման գործում: Հարցաշարի պատասխաններում կարևորվեցին հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության լավագույն գործելակերպի բազում օրինակներ, որտեղ դրսևորվել է նրանց ունեցած դերակատարումը և հավելյալ ներդրումը քաղաքականության մշակման և դրա հետագա իրականացման և մշտադիտարկման գործընթացներում:

33. Հաշմանդամություն ունեցող անձանց հետ կանոնավոր գործունեությունից կշահեն նաև պետական իշխանությունները, քանի որ այդ դեպքում նրանք կտեղեկանան ոչ միայն նրանց հատուկ կարիքների, այլև դրանք լուծելու համար անհրաժեշտ քաղաքականության մասին: Դա նաև հնարավորություն կընձեռի պետական պաշտոնյաներին հասկանալու պետության համար հաշմանդամություն ունեցող անձանց արժեքավոր ներդրումը և ազատվելու հաշմանդամության նկատմամբ հնացած մոտեցումներից, որոնք փաստացիորեն մեկուսացնում են բնակչության որոշակի հատվածը:

[25] Տե՛ս՝ http://pdwa.escwa.org.lb/uploads/nv4584952.pdf

Բ. Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների մասնակցության ապահովում

1. Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպություններ

34. Ամրագրելով, որ պետությունների առաջնային պարտավորությունն է սերտորեն խորհրդակցել հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների հետ իրենց շահերը ներկայացնող կազմակերպությունների միջոցով և ակտիվորեն ներգրավել նրանց որոշումների կայացման գործընթացում, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան անդրադառնում է հաշմանդամություն ունեցող անձանց անմիջական մասնակցության բացակայության հիմնարար մարտահրավերին: Հաշմանդամություն ունեցող անձանց շարժման կարգախոսի՝ «Մեզ առնչվող որևէ որոշում առանց մեզ չի կայացվում» համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձինք ճանաչվում են որպես Կոնվենցիայի իրականացմանն առնչվող քննարկումների հիմնական մասնակիցներ, և Պետությունները պետք է նրանց առնչվող բոլոր հարցերում առաջնային կարևորություն տան նրանց կարծիքներին: Ավելին, 12-րդ հոդվածի և Կոնվենցիայի ընդհանուր սկզբունքների համաձայն՝ հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունք ունեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք, այդ թվում՝ նրանք, ովքեր իրենց դիրքորոշումներն արտահայտելու համար լուրջ օգնության կարիք ունեն:

35. Իրենց մասնակցությունն ապահովելու, սոցիալական կապիտալը կենտրոնացնելու և հավաքական գործունեությունը դյուրացնելու համար՝ հաշմանդամություն ունեցող բոլոր անձինք իրավունք ունեն կազմելու ՔՀԿ-ներ, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպություններ, ինչպես նաև միանալու դրանց և մասնակցելու դրանց գործունեությանը: Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային, ազգային և տեղական կազմակերպությունները ուժեղացնում են հաշմանդամություն ունեցող անձանց համայնքի ազդեցությունը և միջնորդի դեր են կատարում անհատների և պետության միջև՝ դրանով իսկ նպաստելով ներառական հասարակության ստեղծմանը, որտեղ հաշմանդամություն ունեցող անձինք լիարժեքորեն իրացնում են իրենց իրավունքները:

36. Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները հանդիսանում են անդամակցական հասարակական կազմակերպություններ, որոնց նպատակն է իրականացնել համատեղ գործունեություն, ինչպես նաև արտահայտել, խթանել, հետապնդել և (կամ) պաշտպանել իրենց ընդհանուր շահերը: Հաշմանդամություն ունեցող անձանց գլխավորած այդ կազմակերպությունները պետք է ճանաչված լինեն այն հատվածի կողմից, որին դրանք նպատակ ունեն ներկայացնել, և իրենց նպատակների իրականացումը խթանելու համար կարող են կիրառել տարբեր ռազմավարություններ, այդ թվում՝ շահերի պաշտպանություն, իրազեկվածության մակարդակի բարձրացում, ծառայությունների մատուցում և հավասարը հավասարին սկզբունքով աջակցություն: Նրանք կարող են գործել որպես հաշմանդամություն ունեցող անձանց առանձին կազմակերպություններ, կոալիցիաներ կամ հովանավորող կազմակերպություններ, որոնք ձգտում են համակարգել պետական իշխանությունների հետ փոխգործության

շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց շարժման կարծիքի արտահայտումը: Հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների կազմակերպությունները էական դեր են կատարում իրենց երեխաների ինքնուրույնությունը և ակտիվ մասնակցությունը հեշտացնելու, խթանելու և ապահովելու գործում, ընդ որում՝ բոլոր դեպքերում հաշվի առնելով երեխաների կամքը, նախապատվությունը և զարգացող կարողությունները:

37. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան նպաստել է սեփական շահերն ինքնուրույն պաշտպանող մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց, աուտիզմով տառապող անձանց և իրենց դիրքորոշումներն արտահայտելու համար լուրջ օգնության կարիք ունեցող այլ անձանց կազմակերպությունների հիմնման գործընթացի արագացմանը: Աջակցության կարիք ունեցող անձանց ծնողների և հարազատների կազմակերպությունները հաճախ կարևոր դերակատարում են ունեցել նման աջակցություն տրամադրելու գործում: Հանդիպում են նաև այնպիսի կազմակերպություններ, որոնց կազմում ընդգրկված են ինչպես սեփական շահերն ինքնուրույն պաշտպանող հաշմանդամություն ունեցող անձինք, այնպես էլ նրանց ծնողները: Նման կազմակերպություններում ծնողների ունեցած դերակատարումը պետք է աստիճանաբար վերացվի աջակցության տրամադրմանը, իսկ կազմակերպության գործունեության նկատմամբ ողջ վերահսկողությունը պետք է ստանձնեն իրենց շահերն ինքնուրույն պաշտպանող հաշմանդամություն ունեցող անձինք:

38. Հարկ է տարբերակել «հաշմանդամություն ունեցող անձանց» կազմակերպությունները, որոնք գլխավորում են հաշմանդամություն ունեցող անձինք, և «հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանության նպատակով հիմնված» կազմակերպությունները, որոնք, որպես կանոն, հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող և շատ դեպքերում նրանց շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններ են: Հարկ է մանրազնին ուսումնասիրել շահերի պաշտպանության այս դերակատարումը, քանի որ շատ հնարավոր է, որ շահերի պաշտպանությամբ զբաղվող անձինք հետապնդում են իրենց ծառայությունների շարունակականությունն ապահովելու նպատակը՝ անկախ այն հանգամանքից, թե արդյոք դրանց հիմքում ընկած է մարդու իրավունքների պաշտպանությունը կամ հաշմանդամություն ունեցող անձանց նախապատվությունը: Պետությունների կողմից «հաշմանդամություն ունեցող անձանց» կազմակերպությունները և «հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանության նպատակով հիմնված» կազմակերպությունները չտարբերակելը հանդիսանում է կազմակերպությունների նշված երկու տեսակի միջև պատմականորեն առաջացած այնպիսի լարվածության պատճառը, ինչպիսին է օրինակ՝ օրինականության, ընտրության, վերահսկողության և ռեսուրսների բաշխման շուրջ առաջացած լարվածությունը: Որոշումների կայացման գործընթացներին հաշմանդամություն ունեցող անձանց իսկական մասնակցությունն ապահովելու մտադրության շրջանակներում պետությունները պետք է ապահովեն, որ առաջնահերթություն տրվի հենց հաշմանդամություն ունեցող անձանց կամքին և նախապատվությանը:

2. Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հիմնման խթանումը

39. Պետությունները պետք է միավորումներ կազմելու ազատության իրավունքը պաշտպանելու իրենց պարտավորությունների շրջանակներում բարենպաստ միջավայր ապահովեն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հիմնման և գործունեության համար:[26] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով պահանջվում է, որ Պետությունները խթանեն հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հիմնումը՝ նրանց միջազգային, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում ներկայացնելու համար (Հոդված 29): Ըստ այդմ՝ Պետությունները պետք է ընդունեն նման կազմակերպությունների հիմնումը և կայուն գործունեությունը դյուրացնող քաղաքականության ծրագիր,[27] որի շրջանակներում պետք է վերանայվի գործող օրենսդրությունը, ֆինանսական և այլ տեսակի աջակցության տրամադրումը և օրենքով ճանաչված ֆորմալ կառուցակարգի (մեխանիզմ) մշակումը, որը կապահովի հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների որպես իրավաբանական անձ գրանցվելու, որոշումների կայացման գործընթացին մասնակցելու և դրանց կարծիքը հաշվի առնելու հնարավորությունը:[28]

40. Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները հաճախ բախվում են լուրջ մարտահրավերների իրավական կարգավիճակ ձեռք բերելու հարցում, քանի որ գրանցման ընթացակարգերն անհասանելի են և թանկարժեք և ուղեկցվում են վարչական քաշքշուկներով: Այս ամենը խոչընդոտում է իրավաբանական անձի կարգավիճակի և արտաքին ֆինանսավորման ստացմանը և հարկային արտոնությունների պայմաններին համապատասխանելուն: Ավելին, շատ երկրների կանոնակարգերով ամրագրված է, որ համապատասխան ֆորմալ կարգավիճակ ստանալու համար հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները պետք է գրանցվեն ինչպես հիմնական, այնպես էլ հաշմանդամության ունեցող անձանց համար նախատեսված հատուկ գրանցամատյանում: Արդյունքում, հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող բազում կազմակերպություններ մնում են չգրանցված: Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների գրանցումը դյուրացնելու համար պետությունները պետք է կիրառեն պարզ, ճկուն, արագ, լիովին հասանելի, ծանրաբեռնվածություն չառաջացնող և (կամ) անգամ անվճար գրանցման համակարգեր:[29]

---

[26] Տե՛ս՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (Հոդված 22), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (Հոդված 8) և Համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման ուղղությամբ անհատների, խմբերի և հասարակական մարմինների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հռչակագիր:

[27] Տե՛ս՝ www.icnl.org/programs/mena/afan/Docs/Models%20to%20Promote%20Cooperation%20English.pdf

[28] Տե՛ս՝ CRPD/C/QAT/CO/1, կետ 10:

[29] Տե՛ս՝ A/70/266, կետ 26:

41. Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների բարգավաճման համար նպաստավոր միջավայր ապահովելու խնդիրը շարունակում է չլուծված մնալ բազում երկրների համար: Այս խնդրի լուծման համար պահանջվում է ոչ միայն ռազմավարական միջոցներ, այլև շահագրգիռ անձանց ավելի լայն շրջանակի, այդ թվում՝ Կառավարությունների, ազգային իրավապաշտպան կառույցների, միջազգային համագործակցության հաստատությունների և մասնավոր հատվածի համատեղ պատասխանատվությունը:

3. Անկախություն և ինքնուրույնություն

42. Պետությունները պարտավոր են օրենքով կամ գործնականում անհարկի չխոչընդոտել միավորումներ կազմելու ազատության իրավունքի իրացումը:[30] Այդ առումով հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպություններն իրավունք ունեն գործելու առանց պետության միջամտության, իսկ նման կազմակերպությունների անդամները պետք է իրավունք ունենան որոշելու իրենց կանոնները, կառուցվածքն ու գործունեությունը և որոշումներ կայացնել առանց պետության միջամտության:[31] Ուստիև, պետությունները պետք է զերծ մնան նման կազմակերպությունների որոշումներին և գործունեությանը միջամտելուց և ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները, այդ թվում՝ օրենսդրական միջոցները՝ ազգային, շրջանային և տեղական իշխանությունների կողմից իրենց գործունեությունը խոչընդոտելու (օրինակ՝ գրանցման և ֆինանսավորման պահանջները վերանայելու միջոցով) կարողությունը նվազեցնելու համար:

43. Որոշ երկրներում պետությունը հաշվեհարդար է տեսնում նրանց հետ սահմանափակումների, գրաքննության, բյուջեի կրճատումների, ահաբեկման և անհիմն քրեական մեղադրանքների ձևով: Հատուկ զեկուցողը տեղեկացել է հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների դեմ ուղղված դրանց գործունեությունը սահմանափակելու սպառնալիքների մասին այն բանից հետո, երբ նրանք իրենց իրավունքների պաշտպանությունը տեղափոխեցին միջազգային մակարդակ և դատապարտեցին գրանցվելու և արտաքին աղբյուրներից ֆինանսավորում ստանալու խոչընդոտները: Հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող նման պայմաններում լիարժեքորեն իրացնել հասարակական կյանքին մասնակցելու իրենց իրավունքը:

44. Մտահոգիչ է այն հանգամանքը, որ որոշ երկրներում գործող հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները, որոնք իսկապես անկախ են, չունեն իրական ասպարեզ գործունեություն ծավալելու և հասարակական կյանքին մասնակցություն ունենալու համար, մինչդեռ կառավարության կողմից հովանավորվող կազմակերպությունները կարող են գործել ազատ: Պետությունները պետք է ձեռնպահ մնան պահանջելուց, որ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները գրանցվեն որպես իրավաբանական

[30] Տե՛ս՝ A/HRC/20/27, կետ 64:
[31] Տե՛ս նույն տեղում:

անձ կամ դրանց գրանցումը համարվի միավորումների ազատության իրավունքի իրացման նախապայման:[32]

45. Պետությունները հաճախ արդարացնում և օրինականացնում են կազմակերպության գործունեությանն իրենց միջամտությունները՝ հաշվետվողականության և թափանցիկության մակարդակը բարձրացնելու կամ նման կազմակերպությունների գործունեությունը ներդաշնակեցնելու կամ համակարգելու անհրաժեշտության պատճառաբանությամբ, մինչդեռ շատ դեպքերում իրական նպատակն է լռեցնել այլախոհությունը և նման կազմակերպությունները վերացնել կառավարության օժանդակ կառույցի: Այդուհանդերձ, հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները պետական հատվածի մաս չեն կազմում և չեն կարող ենթարկվել որևէ կարգավորումների և վերահսկողության, բացառությամբ օրենքով նախատեսված և ժողովրդավարական պետության օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտության դեպքերի:[33] Պետությունները պետք է նաև ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների անդամները ցանկացած բնույթի ներքին վեճերը լուծելու համար կարողանան անարգել դիմել անկախ և անկողմնակալ դատական մարմնին:

46. Ի վերջո, պետությունները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները կարողանան անարգել դիմել մարդու իրավունքների մշտադիտարկման ազգային և միջազգային մեխանիզմներ իրականացնող կառույցներին, այդ թվում՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե, այլ պայմանագրային մարմիններ, ինչպես նաև օգտվել համընդհանուր պարբերական վերանայման և Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերից:

4. Կարողությունների զարգացում

47. Հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ և իմաստալից մասնակցության մյուս առանցքային բաղադրիչը կարողությունների զարգացումն է: Ամենայն հավանականությամբ շահերի պաշտպանությունն ավելի հաջող կիրականացվի այն դեպքում, երբ կազմակերպություններն իրենց գործունեության շրջանակներում առաջնորդվեն որոշակի ռազմավարությամբ, հստակ պատկերացնեն քաղաքականության գործընթացները և ներդրումներ կատարեն մարդկանց հմտությունների զարգացման մեջ: Հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունների մեծացումը ներառում է մասնագիտական, վարչական և հաղորդակցական հմտությունների զարգացումը, ինչպես նաև տեղեկատվության և նրանց իրավունքներին, օրենսդրությանը և քաղաքականության մշակման գործիքների հասանելիության դյուրացումը: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով ամրագրված բազում նորարարությունները կյանքի կոչելու համար անհրաժեշտ է հաշմանդամություն ունեցող անձանց ուժեղ և անկախ

[32] Տե՛ս՝ A/HRC/20/27, կետ 56:

[33] Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 22-րդ հոդվածի 2-րդ կետ:

շարժում, որը կարող է պատշաճ կարգով համապատասխանել շարժմանն առնչվող բոլոր հարցերի քննարկմանը մասնակցելու պահանջներին:

48. Կառուցվածքային մարտահրավերները մեծապես խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացին: Քանի որ կրթական համակարգը, որպես կանոն, չի կարող պատշաճ կերպով ներառել հաշմանդամություն ունեցող անձանց, հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացին հաջող մասնակցության նրանց հնարավորությունները և կարողությունները սահմանափակ են: Դա ազդում է նաև նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների վրա: Հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքացիական հասարակությանը ժամանակ և ջանքեր տրամադրելու կարողության վրա ազդեցություն է գործում նաև նրանց բավարար եկամուտը և զբաղվածությունն ապահովող սոցիալական պաշտպանության համակարգերի բացակայությունը:

49. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով իրենց ստանձնած պարտավորություններին համապատասխան՝ Պետությունները պետք է ամրապնդեն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների՝ քաղաքականության մշակման գործընթացին մասնակցելու կարողությունները՝ նրանց այդ կարողությունները զարգացնելու և նրանց համար հաշմանդամության նկատմամբ իրավունքների վրա հիմնված մոտեցման վերաբերյալ դասընթացներ կազմակերպելու միջոցով: Պետությունները պետք է նաև զարգացնեն նշված կազմակերպությունների՝ հասարակության կյանքին լիարժեք և արդյունավետ մասնակցություն ունենալու իրենց կարողության առնչությամբ իրենց շահերի պաշտպանության համար անհրաժեշտ իրավասությունները, գիտելիքները և հմտությունները (օրինակ՝ ռազմավարական պլանավորման, հաղորդակցման, տեղեկություններ հավաքելու, շահագրգիռ կողմերի խորհրդակցությունների, փոխգործակցության, շահերի պաշտպանության և մշտադիտարկման անկախ մեխանիզմների թեմաներով):

50. Նման կազմակերպությունների անկախությունը հարգելու հետ մեկտեղ Պետությունները պետք է նրանց աջակցեն ժողովրդավարական կառավարման ավելի ամուր սկզբունքներ մշակելու (օրինակ՝ հարգանք մարդու իրավունքների, օրենքի գերակայության, թափանցիկության, հաշվետվողականության, բազմակարծության և մասնակցության նկատմամբ) և դրանց հաշվետվողականության ամրապնդման գործում և պետք է ուղղորդեն նրանց ֆինանսավորում հայթայթելու և իրենց աջակցության աղբյուրները բազմազան դարձնելու համար:

5. Ֆինանսավորում

51. Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների՝ ֆինանսավորում և միջոցներ ստանալու կարողությունը հանդիսանում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ միավորումներ կազմելու ազատության իրավունքի և արդյունավետ մասնակցության անբաժանելի մասը:[34] Ֆինանսավորման կայունությունն էական

[34] Տե՛ս՝ A/HRC/20/27, կետ 68:

նշանակություն ունի աշխատանքային ծրագրերի արդյունավետությունը և կայունությունն ապահովելու համար, ինչը կազմակերպություններին ընձեռում է ներքին աճի հնարավորություն: Ցանկացած գրանցված կամ չգրանցված կազմակերպություն պետք է կարողանա ֆինանսավորում և միջոցների հայթայթել ազգային և միջազգային դոնորներից, այդ թվում՝ մասնավոր անհատներից, մասնավոր ընկերություններից, ՔՀԿ-ներից, Պետություններից և միջազգային կազմակերպություններից:[35]

52. Կայուն ֆինանսավորման ապահովումը հանդիսանում է հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների առջև ծառացած հիմնական մարտահրավերներից մեկը: Սույն զեկույցը կազմելու համար հավաքված նյութերի համաձայն՝ որոշ Պետություններ հիմնել են ժամանակավոր կամ մշտական հիմնադրամներ նման ներկայացուցչական կազմակերպությունների աշխատանքին, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց՝ տարբեր տեսակի որոշումների կայացման գործընթացին մասնակցությունը սատարելու նպատակով: Թեև նման ծրագրերն էական նշանակություն ունեն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների կայունության համար, ռեսուրսների բաշխման հարցում պետական իշխանությունների լայն հայեցողությունը մտահոգիչ է, քանի որ այն կարող է ազդել նման կազմակերպությունների անկախությանը և ինքնուրույնության վրա: Բացի այդ, մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ որոշ դեպքերում պետական միջոցները նախատեսված են միայն ծառայությունների մատուցման համար, ինչը սահմանափակում է հիմնականում շահերի պաշտպանության (ջատագովության) վրա կենտրոնացած գործող և հնարավոր կազմակերպությունների ֆինանսավորման հնարավորությունները:

53. Այն դեպքերում, երբ պետական ֆինանսավորման պակասի կամ սահմանափակ ծավալի կամ մասնավոր հատվածի կողմից հետաքրքրության պակասի պարագայում կազմակերպություններն ի վիճակի չեն իրենց գործունեությունը պահպանելու համար օգտվել ներպետական հիմնադրամների միջոցներից, նրանք հաճախ ապավինում են ֆինանսավորման արտաքին աղբյուրներին: Նման դեպքերում ոչ թե հիմնական ինստիտուցիոնալ գործառույթները, այլ ֆինանսավորվող գործունեության ոլորտում դոնորների նախապատվությունները և երբեմն նրանց սուղ օրակարգերը կարող են խոչընդոտել հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների կողմից կենսունակ կազմակերպական կառույցի հիմնումը: Նման միտումներն ազդեցություն են գործում կազմակերպությունների երկարաժամկետ պլանավորման և տվյալ ոլորտում ներգրավվածության վրա:[36] Ավելին, ֆինանսավորման կամ ֆինանսական միջոցների հատկացման պատմության բացակայությունը խոչընդոտում է բազում բազային (grass-roots) կազմակերպություններին ցանկացած տեսակի ֆինանսավորման դիմում ներկայացնելու հարցում:

[35] Նույն տեղում:

[36] Արևելյան Աֆրիկայի համայնք, Արևելյան Աֆրիկայի համայնքի մոբիլիզացման ռազմավարության նախագիծ (2010թ.), էջ՝ 24:

54. Պետությունները պետք է կատարեն հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների շահերը ներկայացնող կազմակերպություններին հասանելի պետական միջոցների չափը մեծացնելու վերաբերյալ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի հանձնարարականը, որպեսզի նրանք կարողանան կատարել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով նախատեսված իրենց գործառույթը:[37] Պետությունները պետք է ոչ միայն տնտեսական աջակցություն ցուցաբերեն հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հիմնման և ամրապնդման նպատակով,[38] այլև հնարավորություն ընձեռեն նրանց ֆինանսավորում ստանալ արտաքին աղբյուրներից միջազգային համագործակցության շրջանակներում, որից օգուտ ստանալու իրավունք ունեն նաև ՔՀԿ-ները:[39]

6. Ռազմավարական դաշինքներ

55. Ցանցերի, կոալիցիաների և ռազմավարական դաշինքների հիմնումը խիստ կարևոր է, քանի որ հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպություններն առանձին-առանձին չեն կարող նպաստել ներառական հասարակության հաստատմանը: Փոխգործակցությունը և կոալիցիայի կազմումն էական գործիքներ են հանդիսանում ինչպես կազմակերպչական, այնպես էլ ջատագովության (շահերի պաշտպանության) կարողությունների առումով հավաքական ազդեցությունը մեծացնելու համար: Դրանք նաև դյուրացնում են տեղեկատվության, փորձի և լավագույն գործելակերպի փոխանակումը՝ դրանով իսկ մեծացնելով հաջող ջատագովության հնարավորությունները և նպաստելով բազմակարծությանը և փոխզիջմանը:

56. Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները պետք է համագործակցային հարաբերություններ հաստատեն այլ դերակատարների հետ, այդ թվում՝ այլ հատվածների ՔՀԿ-ների, ՀԿ-ների, մարդու իրավունքների պաշտպանների, ծառայություններ մատուցողների, քաղաքական կուսակցությունների, բազմահատվածային կազմակերպությունների և միջազգային համագործակցության գործակալությունների հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանության համար համատեղ աշխատանք կատարելու նպատակով: Համագործակցության համար անհրաժեշտ է հաշմանդամության նկատմամբ մարդու իրավունքների վրա հիմնված ընդհանուր ընկալման ձևավորում՝ այդպիսով խուսափելով բարեգործության վրա հիմնված և հայրիշխանական (պատերնալիստական) մոտեցումներից: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները ոչ թե «հատուկ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված իրավունքներ» են, այլ՝ համընդհանուր մարդու իրավունքները, որոնք կիրառելի են բոլոր մարդկանց նկատմամբ:

---

[37] Տե՛ս՝ CRPD/C/GAB/CO/1, կետ 9, CRPD/C/KEN/CO/1, կետ 8, CRPD/C/AUS/CO/1, կետ 13 և CRPD/C/HUN/CO/1, կետ 14:

[38] Հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորությունների հավասարեցման ստանդարտ կանոններ, Կանոն 18:

[39] Տե՛ս՝ A/59/401, կետ՝ 82:

57. Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները մասնակցում են տարբեր տեսակի համագործակցության հարթակներում, օրինակ՝ մեկուսացման և խտրականության ենթակա այլ խմբերի, օրինակ՝ բնիկների կամ տարեց մարդկանց կողմից իրականացվող ջատագովության նախաձեռնությունների շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության խթանում: Այս մոտեցումը հատկապես կարևոր նշանակություն ունի, քանի որ հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ ստվերում են եղել և չեն ընդգրկվել հաշմանդամությանը չվերաբերող քննարկումներում և գործընթացներում:[40] Ավելին, հաշմանդամություն ունեցող անձանց ներկայացնող կազմակերպությունները կարող են օգտվել այլ քաղաքացիական հասարակության շարժումների ուժեղ կողմերից և փորձից՝ հաշմանդամություն ունեցող անձանց շարժումն ամրապնդելու համար:

7. Հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկներ

58. Քանի որ ուժերի անհավասարության և խտրականության բազում ձևերի պատճառով հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները պատմության ընթացքում բախվել են հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացին մասնակցելու բազում խոչընդոտների, նրանք ավելի քիչ հնարավորություններ են ունեցել հիմնել կազմակերպություններ կամ միանալ այնպիսի կազմակերպություններին, որոնք կարող են ներկայացնել իրենց՝ կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները: Ուստիև, չնայած նրանց նկատմամբ մարդու իրավունքների լայնածավալ խախտումներին՝ գենդերային պատկանելիության և հաշմանդամության հետ կապված հարցերի փոխկախվածությունը դեռևս լիարժեքորեն չի ընդգրկվել հաշմանդամություն ունեցող անձանց կամ հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանությունը խթանող տարբեր շահագրգիռ կողմերի աշխատանքում: Ընդունելով այս իրավիճակը՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով պետություններից պահանջվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու նրանց լիարժեք զարգացումը, առաջընթացը և հնարավորությունների մեծացումը: Պետությունները պետք է քայլեր ձեռնարկեն հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացին նրանց մասնակցությունը խոչընդոտող արգելքները վերացնելու ուղղությամբ և պետք է ապահովեն, որ բոլոր մասնակցային մեխանիզմները և մարմինները հաշվի առնեն ինչպես հաշմանդամության, այնպես էլ գենդերային պատկանելիության գործոնները և դրանց միջև գոյություն ունեցող բարդ փոխհարաբերությունները:

59. Պետությունները պետք է հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների հետ աշխատեն տեղերում, հատկապես այն դեպքերում, երբ մշակութային և սոցիալական պատկանելության պատճառով բաց խորհրդակցություններին նրանց մասնակցությունը կարող է լինել վտանգավոր: Պետությունները պետք է նաև բավարար միջոցներ մշակեն՝ երաշխավորելու, որ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների հեռանկարները լիարժեքորեն հաշվի առնվեն, և որ իրենց տեսակետներն ու մտահոգություններն արտահայտելու համար նրանք չենթարկվեն ճնշումների, հատկապես՝ սեռական և վերարտադրողական

[40] Տե՛ս՝ A/HRC/28/58, 21-րդ կետի «դ» ենթակետ:

իրավունքների խախտման, գենդերային պատկանելիության վրա հիմնված բռնության և սեռական բռնության:

8. Ներգրավվածություն

60. Պետությունները պետք է խթանեն բնակչության բոլոր խմբերում հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ պատմության ընթացքում խտրականության ենթարկված կամ անբարենպաստ սոցիալական պայմաններում բնակվող խմբերի, օրինակ՝ բնիկ ժողովուրդների, աղքատ կամ գյուղաբնակ մարդկանց, ԼԳԲՏԻ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, ինտերսեքս) և այլ անձանց մասնակցությունը: Պետությունները պետք է նաև ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձանց (մասնավորապես՝ երեխաների, դեռահասների և տարեց մարդկանց) և մասնավորապես՝ զանազան ձևերի ախտաբանական խախտումներ ու հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում՝ խուլ անձինք, աուտիզմով տառապող անձինք և հոգեսոցիալական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք) ձայները լսելի լինեն իրենց կյանքի ողջ ընթացքում:

61. Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները պետք է խթանեն հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների, ինչպես նաև բնակչության բոլոր խմբերին պատկանող անձանց՝ որպես հասարակության ակտիվ անդամների մասնակցությունը բազմակարծության և ներգրավվածության շրջանակներում: Թեև հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները կարող են ունենալ տարբեր օրակարգեր և տարբեր գործունեություն ծավալել կառավարության տարբեր մակարդակներում, շահերի և ռազմավարությունների նման բազմազանությունը չպետք է հանգեցնի հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբերի մեկուսացմանը: Հաշմանդամություն ունեցող անձանց շարժումն ուժեղ կլինի միայն իր բազմազանությունը ողջունելու միջոցով:

Գ. Հաշմանդամություն ունեցող անձանց համար խորհրդակցությունների կազմակերպման և նրանց ակտիվ ներգրավվածության խթանում

1. Օրենսդրական դաշտ

62. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով Պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ օրենսդրական, վարչական և այլ միջոցները՝ հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց արդյունավետ և ակտիվ մասնակցությունն ապահովելու համար: Սա ենթադրում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ ինչպես մասնակցության, այնպես է միավորումներ կազմելու իրավունքի ճանաչում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների՝ նման անձանց ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում ներկայացնելու իրավունքը: Պետությունները պետք է նաև ընդունեն այնպիսի օրենսդրություն, որը նպաստի օրենքներ և քաղաքականություն մշակելու, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց և դրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հնարավորությունները սահմանափակող օրենքների,

կանոնակարգերի, սովորույթների և գործելակերպի մեջ փոփոխություններ կատարելու կամ դրանք ուժը կորցրած ճանաչելու գործընթացներին հաշմանդամություն ունեցող անձանց ուղղակի և անուղղակի մասնակցությանը: Հասարակական կյանքում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը պետք է լինի արդյունավետ կառավարման հիմքում ընկած բազմահատվածային սկզբունքը:

63. Ազգային օրենսդրությամբ պետք է հստակորեն ամրագրված լինի պետական իշխանություններին ուղղված պահանջը՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ օրենսդրության և քաղաքականության մշակման և իրականացման գործում սերտորեն խորհրդակցել և ակտիվորեն ներգավել հաշմանդամություն ունեցող անձանց (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող կանանց և երեխաներին) նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների միջոցով: Այդ նպատակով անհրաժեշտ է հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ նախնական խորհրդակցություններ անցկացնել և աշխատանք տանել հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացի բոլոր փուլերում, այդ թվում՝ նախքան իրենց վերաբերող օրենսդրության, քաղաքականության և ծրագրերի ընդունումը: Այս պարտականությունը գերազանցում է խորհրդատվության և հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման հասանելիության հարթակները՝ անցնելով գործընկերության, պատվիրակված լիազորությունների և քաղաքացիական վերահսկողության ոլորտներ:

64. Կարևոր է, որ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում ներառված «հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող հարցերի շուրջ» արտահայտությունը պետք է հասկացվի լայն իմաստով՝ ներառելով այնպիսի օրենսդրական, վարչական և այլ միջոցների լայն շրջանակ, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ազդեցություն գործել հաշմանդամություն ունեցող անձանց վրա: Նման միջոցները ներառում են ցանկացած՝ ինչպես հաշմանդամություն ունեցող անձանց, այնպես էլ ընդհանուր որոշումների կայացման գործընթացներ, որոնք կարող են ազդեցություն գործել նրանց կյանքի վրա:

65. Պետությունները պետք է խորհրդակցեն հաշմանդամություն ունեցող անձանց հետ և նրանց ակտիվորեն ներգրավեն օրենքների և քաղաքականության մշակման գործում և մշակեն ֆորմալ կառուցակարգեր (մեխանիզմներ) և իրավական պաշտպանության միջոցներ՝ առանց վավերականության այս նախապայմանի ընդունված որոշումները վիճարկելու համար:

2. Ինստիտուցիոնալացված խորհրդատվական մարմիններ և մեխանիզմներ

66. Թեև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում շեշտադրվում է հաշմանդամություն ունեցող անձանց իրենց շահերը ներկայացնող կազմակերպությունների միջոցով որոշումների կայացման գործընթացներում ներգրավելու կարևորությունը, Կոնվենցիայում չի ներկայացվում մասնակցությունն ապահովելու միջոցի մասին որևէ ուղեցույց: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների Կոմիտեն կարևորել է ֆորմալ մեխանիզմներ և արձանագրություններ կազմելու և հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ կառավարության բոլոր մակարդակներում կանոնավոր խորհրդակցություններ

անցկացնելու անհրաժեշտությունը: Խորհրդակցության նշված մեխանիզմները կարող են ներառել ինստիտուցիոնալացված խորհրդակցական մարմիններ և անմիջական մասնակցության համար նախատեսված այլ ֆորմալ մեխանիզմներ:

67. Բազում երկրներում հիմնվել են հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով երկու առաջատար գործակալություններ և դրանց ներքո գործող համակարգող կոմիտեներ կամ նմանօրինակ մարմիններ՝ կազմված կառավարության տարբեր ներկայացուցիչներից, հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպություններից և հասարակական կազմակերպություններից: Պետությունները պետք է ամրապնդեն նշված կառույցները, որպեսզի դրանք ծառայել որպես Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման կենտրոններ կամ համակարգման մեխանիզմներ՝ դրանով իսկ մշտական տարածություն բացելով հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության համար:

68. Չնայած հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով երկու առաջատար գործակալությունները կարող են արդյունավետ դերակատարում ունենալ պետության և քաղաքացիական հասարակության միջև փոխհարաբերություններն ամրապնդելու գործում, դրանք պետք է փոխլրացնեն անմիջական խորհրդակցությունները և երկխոսությունն այլ ֆորմալ մեխանիզմների միջոցով, քանի որ դրանց կառուցվածքը, որպես կանոն, սահմանափակում է հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների քանակը և բազմազանությունը: Հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավման լրացուցիչ մեխանիզմները կարող են դրսևորվել կլոր սեղան քննարկումների, մասնակցային երկխոսությունների, հանրային լսումների կամ առցանց խորհրդակցությունների ձևով:

69. Հաշվի առնելով, որ հաշմանդամություն ունեցող անձանց որոշակի խմբեր բախվում են հասարակական կյանքին մասնակցելու հետ կապված լրացուցիչ մարտահրավերների՝ տվյալ երկրում գործող և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունները կարող են նրանց ներկայացնել ոչ բավարար ձևով: Ըստ այդմ՝ Պետությունները պետք է ոչ միայն խրախուսեն և աջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպություններում սոցիալապես անապահով խմբերից հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը, այլև ճկունություն դրսևորեն և մշակեն խորհրդակցական մեխանիզմներ՝ հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մասնակցությունը հնարավոր դարձնելու համար: Դա հատկապես կարևոր է բազում ախտաբանական խախտումներ, մտավոր կամ հոգեբանական հաշմանդամություն ունեցող, աուտիզմով տառապող և խուլ ու կույր անձանց համար: Պետությունները պետք է մշակեն նման խմբերի ներկայացուցիչների հետ տեղերում աշխատելու ռազմավարություն, որն ուղղված է նրանց մասնակցության ապահովմանը: Հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց լայնածավալ ներառումը հանդիսանում է իսկապես ներառական և բազմազան հասարակություն ձևավորելու համար պետությունների առավել արդյունավետ գործիքներից մեկը:

70. Ի վերջո, պետությունները պետք է նպաստեն, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները մասնակցեն ոչ միայն հատուկ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված խորհրդակցական մարմինների և

մեխանիզմների աշխատանքին: Բազում երկրներում, թեպետև ՔՀԿ-ները զանազան ոլորտներում (օրինակ՝ աղքատություն, զբաղվածություն կամ կրթություն) գործունեություն ծավալող տարբեր կոմիտեների կամ միասնական (կոլեգիալ) մարմինների մաս են կազմում, հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները հազվադեպ են ներգրավվում նման կոմիտեներում կամ մարմիններում: Քանի որ հաշմանդամությունը հանդիսանում է բազմահատվածային հարց, հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները նշված հարթակներում պետք է ունենան նույն հնարավորությունները, ինչ մյուսները:

3. Խտրականության բացառում

71. Պետությունները պետք է ապահովեն հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց՝ որոշումների կայացման գործընթացին այլոց հետ հավասար հիմունքներով մասնակցելու իրավունքը: Ուստիև, նրանք պետք է պարտավորվեն երաշխավորել այս իրավունքն առանց հաշմանդամության հիմքով խտրականության և վերացնեն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային, էթնիկական, տեղական կամ սոցիալական ծագման, գույքային դրության, ծննդյան, տարիքի կամ որևէ այլ հիմքով:

72. Քանի որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկներն ավելի մեծ ռիսկային խմբում են խտրականության բազում ձևերին ենթարկվելու առումով, Պետությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն նրանց կյանքի վրա ազդեցություն գործող բոլոր որոշումների կայացման գործընթացներին նրանց ակտիվ և ուղղակի մասնակցության իրավունքի երաշխավորմանը:

73. Պետությունները պետք է նաև ըստ անհրաժեշտության ողջամիտ պայմաններ ստեղծեն երկխոսության և խորհրդատվական գործընթացներին մասնակցող հաշմանդամություն ունեցող անձանց համար: Նման պայմանները պետք է ներառեն այլոց հետ հավասար հիմունքներով նրանց արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ ողջամիտ ժամկետները և տեխնիկական աջակցությունը: Ցավոք, շատ երկրներ չեն ճանաչում այդ իրավունքը կամ սահմանափակում են այն միայն զբաղվածության ոլորտով:[41] Այդուհանդերձ, ըստ մարդու իրավունքների միջազգային իրավունքի՝ Պետությունները պարտավոր են անհապաղ ապահովել ողջամիտ պայմանների իրավունքը, ընդ որում՝ այդ պարտականությունը աստիճանաբար կատարման ենթակա չէ, և այն կատարելու մերժումը հանդիսանում է խտրականություն:[42]

74. Շատ երկրներում հաշմանդամություն ունեցող երեխաները չեն ստանում հաշմանդամությանը և տարիքին համապատասխան աջակցություն, որը թույլ կտա նրանց մասնակցել իրենց կյանքին վերաբերող որոշումների կայացման գործընթացներին: Պետությունները պետք է երաշխավորեն հաշմանդամություն ունեցող երեխաների՝ իրենց կյանքին առնչվող բոլոր հարցերի շուրջ իրենց տեսակետներն ազատորեն արտահայտելու իրավունքը և տարիքին ու հասունությանը համապատասխան կշիռ տան դրանց մյուս երեխաների

[41] Տե՛ս՝ A/70/297, կետ 71:
[42] Նույն տեղում:

համեմատ հավասար հիմունքներով:[43] Սույն զեկույցի հիմքում ընկած նյութերը ցույց են տալիս որոշումների կայացման գործընթացին երեխաների մասնակցության ուղեցույցների և հաշմանդամություն ունեցող անձանց ներառական ռազմավարությունների գործարկման առավելությունը:

4. Մատչելիություն

75. Պետությունները պետք է երաշխավորեն հասարակական կյանքի վերաբերյալ որոշումների կայացմանը և խորհրդակցությանն առնչվող բոլոր պայմանների և ընթացակարգերի մատչելիությունը: Մատչելիությունը հանդիսանում է հաշմանդամություն ունեցող անձանց՝ կյանքի բոլոր ոլորտներում լիարժեք մասնակցության նախապայմանը: Ուստիև, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի համաձայն՝ Պետությունները պետք է համապատասխան միջոցներ ձեռնարկեն ապահովելու, որ հաշմանդամություն ունեցող անձանց մյուսների հետ հավասար հիմունքներով հասանելի լինեն ֆիզիկական միջավայրը, փոխադրամիջոցները, տեղեկատվությունը և հաղորդակցումը (այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաները և համակարգերը) և հանրությանը հասանելի կամ տրամադրվող այլ պայմանները և ծառայությունները ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում:

76. Առանց մատչելի տեղեկատվության և հաղորդակցության տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող մի շարք անձինք չեն կարող արդյունավետ մասնակցություն ունենալ օրենքների և քաղաքականության մշակման գործում: Սա հատկապես վերաբերում է զգայական և մտավոր ախտաբանական խախտումներ ունեցող անձանց: Ընդհանուր առմամբ, որոշում կայացնող մարմինները և մեխանիզմները տեղեկատվությունը մատչելի ձևաչափերով (օրինակ՝ դյուրընթեռնելի ձևաչափով) չեն մշակում և չեն տարածում, ոչ էլ ապահովում են սուրդոթարգմանություն, խուլ և կույր անձանց ուղեկցող սուրդոթարգմանիչներ կամ հանրային քննարկումների ընթացքում ենթագրեր: Պետությունները պետք է ապահովեն հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման ողջ գործընթացի, այդ թվում՝ հանրային քննարկումների անցկացման շենքերի և համապատասխան տեղեկատվության, նյութերի և հաղորդակցության մատչելիությունը:

77. Նոր տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները, մասնավորապես՝ համացանցը, կարող են զգալիորեն մեծացնել հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը: Գնալով աճում է հատկապես էլեկտրոնային կառավարման և էլեկտրոնային ժողովրդավարության նախաձեռնությունների միջոցով «առցանց քաղաքացիություն» հասկացության իմաստի ընդլայնման գործում համացանցի ունեցած դերի վերաբերյալ իրազեկվածությունը:[44] Լիարժեք մատչելիություն ապահովելու շրջանակներում պետությունները պետք է ավելի մեծ ջանքեր գործադրեն համացանցի, ինչպես նաև այլ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների հասանելիության բացը լրացնելու համար: Պետությունները

[43] Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա, 7-րդ հոդվածի 3-րդ կետ:

[44] Տե՛ս՝ A/HRC/23/50, կետ 31:

չպետք է սահմանափակվեն էլեկտրոնային միջոցներով մասնակցության հնարավորություն տրամադրելով, այլ պետք է ապահովեն նաև մասնակցության և խորհրդակցության այլ ձևերը:

5. Բարեխիղճ վերաբերմունք

78. Պետությունները պետք է բարեխղճորեն խորհրդակցություն տրամադրեն և աշխատանք տանեն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ: Սա հանդիսանում է արդյունավետ կառավարման և միջազգային իրավունքի հիմնական սկզբունքը, ինչպես նշված է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 2-րդ հոդվածի 2-րդ կետում: Բարեխիղճ վերաբերմունքի սկզբունքով պահանջվում է, որ անդամ պետությունները գործեն բարեխղճորեն և արդարացիորեն, ազնվորեն ներկայացնեն իրենց դրդապատճառները և նպատակները և զերծ մնան որևէ անարդար առավելություններից օգտվելուց:[45]

79. Ուստիև, բարեխղճությունը պետք է լինի հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ երկխոսության և խորհրդակցության ընթացքում Պետությունների բոլոր գործողությունների անկյունաքարը և պետք է ընկած լինի Պետությունների՝ հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացին մասնակցելու կանոնների մեկնաբանության հիմքում: Խորհրդակցությունների հիմքում պետք է ընկած լինեն թափանցիկությունը, փոխադարձ հարգանքը, իմաստալից երկխոսությունը և համաձայնության հասնելու անկեղծ մտադրությունը: Խորհրդակցությունները պետք է անցկացվեն հաշմանդամություն ունեցող անձանց շարժման բազմազանությանը համահունչ ընթացակարգերին համապատասխան և պետք է ընձեռեն ողջամիտ և իրատեսական ժամկետների հնարավորություն:[46]

80. Պետությունները պետք է ձեռնարկեն մասնակցության և խորհրդատվական տարբեր մեխանիզմների գործարկման կանոնավոր գնահատում՝ հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների ակտիվ ներգրավմամբ՝ բարեխիղճ վերաբերմունքի սկզբունքի պահպանումն ապահովելու համար: Սույն զեկույցի հիմքում ընկած նյութերում կարևորվում է ՔՀԿ-ների ներգրավման և դրանց համար նախատեսված խորհրդակցությունների կանոնակարգերի մշակման նշանակությունը:

6. Իրազեկության մակարդակի բարձրացում

81. Խարանի և մեկուսացման պատճառով հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ մնում են հասարակության ստվերում, և նրանց կարծիքները պատշաճ կարգով հաշվի չեն առնվում կամ ծանրակշիռ չեն համարվում: Պետությունները պետք է բարձրացնեն հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության կարևորության և նման գործընթացների վրա նրանց

[45] Anthony D'Amato, "Good faith" (Էնթոնի Դամաթո «Բարեխղճություն»,) Միջազգային հանրային իրավունքի հանրագիտարան, (1992թ.), էջ 599:

[46] Տե՛ս՝ CRPD/C/HUN/CO/1, կետ 14:

գործած դրական ազդեցության վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակը: Նրանք պետք է մշակեն հատուկ պետական մարմինների աշխատակիցների և պետական պաշտոնյաների, հատկապես՝ քաղաքականության մշակման գործում ներգրավված պաշտոնյաների համար նախատեսված վերապատրաստման ծրագրեր: Այս գործողությունները պետք է իրականացվեն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ խորհրդակցությամբ, և հարկ է ապահովել ուսուցիչների, դասախոսների կամ խորհրդատուների կարգավիճակում հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ մասնակցությունը:

82. Պետությունները պետք է իրականացնեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ վերապատրաստման ծրագրեր՝ ուղղված իրազեկության մակարդակի բարձրացմանը: Հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունները կարող են նպաստել նման աշխատանքներին՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար անցկացնելով դասընթացներ նրանց իրավունքների և պարտականությունների և առաջարկվող քաղաքականությունների և որոշումների՝ իրենց կյանքի վրա գործած հնարավոր ազդեցության վերաբերյալ: Հաշմանդամության նկատմամբ իրավունքների պաշտպանության վրա հիմնված մոտեցման վերաբերյալ իրազեկության բարձրացման և կրթական ծրագրերը կարող են նաև նպաստել ժողովրդավարության խթանմանը և պաշտպանությանը:

Դ. Մասնակցության հիմնական ոլորտներ

1. Օրենսդրության համապատասխանեցում

83. Մարդու իրավունքներին վերաբերող միջազգային և տարածաշրջանային փաստաթղթերի մասնակից պետությունները պարտավոր են ապահովել, որ իրենց ներպետական օրենսդրությունը համապատասխանի միջազգային չափանիշներին: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով պահանջվում է, որ պետությունները ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ օրենսդրական միջոցները՝ հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրացումն ապահովելու համար և անվավեր ճանաչեն այդ նպատակին չհամապատասխանող ցանկացած օրենք: Ուստիև, Պետությունները պետք է իրականացնեն գործող օրենսդրության՝ Կոնվենցիայով ստանձնած իրենց պարտավորություններին համապատասխանության ամբողջական վերանայում: Պետությունները պետք է այդ գործընթացի շրջանակներում սերտորեն խորհրդակցեն և ակտիվորեն ներգրավեն հաշմանդամություն ունեցող անձանց՝ նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների միջոցով:

84. Հաշմանդամություն ունեցող անձինք կարող են տարբեր եղանակներով մասնակցել օրենսդրության մշակման գործընթացներին: Շատ երկրներում քաղաքացիներն իրավունք ունեն առաջարկել օրենսդրական նախաձեռնություններ և հանրաքվեի անցկացում, և ներկայացնել միջնորդություններ առանց քաղաքական կուսակցությունների կամ պետական մարմինների աջակցության: Պետությունները պետք է ապահովեն, որ ժողովրդավարության կենսագործման նման ընթացակարգերը լիարժեքորեն հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց:

85. Թեև օրենսդրական գործընթացը կարող է տարբերվել երկրից երկիր, օրենսդիր մարմինները պետք է երաշխավորեն հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը ողջ գործընթացին, այդ թվում՝ խորհրդակցական ժողովներին կամ այն մարմինների նիստերին, որոնք քննարկում և քվեարկության են դնում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող օրենքների նախագծերը: Ազգային օրենսդիր մարմիններն իրենց ընթացակարգային կանոնների շրջանակներում պետք է մշակեն հատուկ դրույթներ, որոնք հնարավորություն կընձեռեն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպություններին մասնակցել խորհրդատվական խմբերի և օրենսդրական հանձնաժողովների աշխատանքին, ինչպես նաև հանրային լսումներին և առցանց խորհրդակցություններին: Հարկ է նաև երաշխավորել համապատասխան պայմանների և ընթացակարգերի առկայությունը:

2. Բյուջեի կազմում

86. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունքը ներառում է նաև պետական բյուջեի կազմման գործընթացին մասնակցությունը: Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունները կարող են կարևոր դերակատարում ունենալ պետական բյուջեի կազմման գործում՝ տրամադրելով կարևոր տեղեկատվություն նման անձանց խնդիրների, կարիքների և գերակայությունների վերաբերյալ: Պետական բյուջեի կազմման աշխատանքներին հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների մասնակցությունն ապահովում է միջոցների հատկացումը առաջնային նշանակության ոլորտներին և ընդհանուր ու հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված քաղաքականությունների և ծրագրերի իրականացման համար դրանց համար պատասխանատու մարմինների հաշվետվողականությունը:

87. Պետությունները ներկայացնում են բյուջեի կազմման գործընթացին մասնակցելու աստիճանաբար աճող թվով մեխանիզմներ, որոնք քաղաքացիներին թույլ են տալիս իշխանությունների հետ ուղիղ քննարկումների և բանակցությունների միջոցով ազդել պետական միջոցների հատկացման վրա: Թեև բյուջեի կազմման գործընթացին մասնակցությունը հաշմանդամություն ունեցող անձանց արժեքավոր հնարավորություն է ընձեռում՝ նպաստելու իրենց կարիքների և նախասիրությունների նկատմամբ Պետությունների արագ արձագանքելու կարողությունների բարելավմանը, դրանց արդյունավետության հիմքում ընկած են մատչելիության ապահովումը և կարողությունների զարգացումը:

88. Սույն զեկույցի հիմքում ընկած նյութերը վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունները, որպես կանոն, դուրս են մնում պետական բյուջեի կազմման գործընթացներից: Այս առումով մտահոգիչ են ռեսուրսների ոչ պատշաճ տեղաբաշխումը և գերակա ոլորտների, այդ թվում՝ մասնակցային մեխանիզմների և հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների ֆինանսավորման նպատակով, ոչ պատշաճ նույնականացումը: Ուստիև, Պետությունները պետք է ընդունեն այնպիսի օրենսդրություն, որը կդյուրացնի բյուջեի կազմման գործընթացի բոլոր փուլերում

հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների մասնակցությունը:

3. Ազգային մակարդակով Կոնվենցիայի իրականացում և վերահսկողություն

89. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 33-րդ հոդվածով պահանջվում է, որ Մասնակից պետություններն իրենց կառավարությունում սահմանեն մեկ կամ մեկից ավելի համակարգող կառույցներ և ուսումնասիրեն համակարգման մեխանիզմի մշակումը բոլոր մակարդակներում կոնվենցիայի իրականացումը խթանելու և դյուրացնելու համար: Պետություններից պահանջվում է նաև մշակել անկախ մեխանիզմ Կոնվենցիայի իրականացումը վերահսկելու համար: Անհրաժեշտ է ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների ներգրավումը և լիարժեք մասնակցությունը ոչ միայն Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողության գործընթացում, այլև՝ 33-րդ հոդվածով ամրագրված բոլոր դրույթների շրջանակներում:[47]

90. Հետևաբար, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման և դրա նկատմամբ վերահսկողության ազգային օրենսդրական հիմքի մշակման գործընթացում հարկ է ներառել հաշմանդամություն ունեցող անձանց նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների միջոցով: Նման օրենսդրությունը պետք է կիրառվի թափանցիկ եղանակով, և հաշմանդամություն ունեցող անձինք պետք է ունենան իրենց ընթացակարգերին համապատասխան ներկայացուցչականությունը որոշելու հնարավորություն: Արդյունավետության նկատառումներով հարկավոր է ապահովել Կոնվենցիայի իրականացման նկատմամբ վերահսկողության մեխանիզմների և ներկայացուցչական կազմակերպությունների ինքնուրույնությունը և անկախությունը:

4. Միջազգային վերահսկողություն

91. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայում ընդգծվում է հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների՝ միջազգային մակարդակով որոշումների կայացման գործընթացին մասնակցության կարևորությունը: Կոնվենցիան կոչ է անում պետություններին խորհրդակցել հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ և ընդգրկել նրանց Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեին ներկայացվող մասնակից պետությունների զեկույցների կազմման գործում (տե՛ս՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետ): Պետությունները պետք է խորհրդակցեն հաշմանդամություն ունեցող անձանց հետ նաև մարդու իրավունքների այլ մեխանիզմների, օրինակ՝ Կոնվենցիայի այլ պայմանագրային մարմինների, Համընդհանուր պարբերական դիտարկման և հատուկ ընթացակարգերի շրջանակներում զեկույցներ պատրաստելիս:

92. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան կոչ է անում Պետություններին սերտորեն խորհրդակցել հաշմանդամություն ունեցող անձանց հետ և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների

[47] Տե՛ս՝ A/HRC/13/29, կետ 70:

միջոցով ակտիվորեն ներգրավել նրանց նաև Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի փորձագետի պաշտոնի համար թեկնածուների առաջադրման գործում (տե՛ս՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի 3-րդ կետ): Դա հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն կընձեռի առաջադրել պատշաճ որակավորում ունեցող թեկնածուներ և առաջադրվել որպես Կոմիտեի անդամներ: Պետությունները պետք է խրախուսեն հաշմանդամություն ունեցող անձանց առաջադրել իրենց թեկնածությունը և սատարեն Կոմիտեի և Կոնվենցիայի շրջանակներում գործող այլ մարմինների անդամների ընտրության գործընթացներին նրանց մասնակցությունը:

93. Վերջին տարիներին արվել են Կոնվենցիայի հիմնական համակարգն ամրապնդելու և անցյալի մարտահրավերները հաղթահարելու մի քանի առաջարկներ, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու առաջարկներ:[48] Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների՝ մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մշտադիտարկմանը մասնակցելու համար պահանջվում է մատչելի ձևաչափերով ընթացակարգերի և տեղեկատվության առկայությունը: Համընդհանուր պարբերական վերանայումը, մարդու իրավունքների պաշտպանության պայմանագրային մարմինները, Մարդու իրավունքների խորհրդի հատուկ ընթացակարգերը, ինչպես նաև՝ մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային մարմինները պետք է ավելի մեծ ջանքեր գործադրեն այս ուղղությամբ:

5. Որոշումների կայացման միջազգային գործընթացները

94. Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների ներգրավման պահանջը տարածվում է նաև միջազգային մակարդակով որոշումների կայացման գործընթացների վրա: Նման գործընթացներին մասնակցությունը կարող է երաշխավորել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների և պահանջների պատշաճ կարևորմանը և Միավորված ազգերի կազմակերպության համակարգի, այդ թվում՝ ծրագրերի, հիմնադրամների, մասնագիտացված գործակալությունների և այլ մարմինների աշխատանքում ներառմանը: Միավորված ազգերի կազմակերպության համակարգը պետք է երաշխավորի հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց շահերը ներկայացնող կազմակերպությունների միջոցով մասնակցությունը՝ խթանելով նրանց ներդրումը միջազգային մակարդակով որոշումների կայացման բոլոր գործընթացներին, այդ թվում՝ հենց Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում նման գործընթացներին, օրինակ՝ ողջ համակարգի վրա տարածվող գործողությունների ծրագրերի կազմում և մշտադիտարկում, ռազմավարական պլանավորում և կառավարում: Այդ նպատակով Միավորված ազգերի կազմակերպության համակարգը պետք է ապահովի հաշմանդամություն ունեցող անձանց անմիջական մասնակցությունը

[48] ՄԻԳՀԳ. «ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի զեկույց. ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության պայմանագրային մարմինների համակարգի ամրապնդում» (“Strengthening the United Nations human rights treaty body system: a report by the United Nations High Commissioner for Human Rights”) (2012թ.) և ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի «Միավորված ազգերի կազմակերպության ամրապնդում. հետագա փոփոխության օրակարգ» (“Strengthening the United Nations: an agenda for further change”), (2002թ.):

հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային գագաթաժողովներին, բարձր մակարդակի ժողովներին, մշտական համաժողովներին և կոնֆերանսներին: Կայուն զարգացման 2030 թվականի օրակարգի իրականացման և մշտադիտարկման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների բազմակողմանի մասնակցությունը պարտադիր է:

95. Խիստ կարևոր է նաև մասնակցությունը Միավորված ազգերի կազմակերպության համակարգի շրջանակներից դուրս միջազգային մակարդակով որոշումների կայացման գործընթացներին: Ի թիվս այլոց, հավասարապես կարևոր է նաև տարածաշրջանային պայմանագրերի մշակման, միջազգային առևտրային համաձայնագրերի ընդունման և Համաշխարհային բանկի անվտանգության քաղաքականությունների վերանայման և արդիականացման գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների ներգրավումը և մասնակցությունը:

6. Միջազգային համագործակցություն

96. Միջազգային համագործակցությունը առանցքային նշանակություն ունի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի խնդիրների և նպատակների իրականացմանն ուղղված ազգային իշխանությունների ջանքերը սատարելու համար: Պետությունները պետք է ձեռնարկեն պատշաճ և արդյունավետ միջոցներ՝ պետությունների միջև միջազգային համագործակցությունը, այդ թվում՝ Հարավ-Հարավ և եռակողմ համագործակցությունը սատարելու համար՝ ըստ անհրաժեշտության համապատասխան միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների և ՔՀԿ-ների, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների հետ գործակցությամբ: Խիստ կարևոր է ներգրավել և խորհրդակցել հաշմանդամություն ունեցող անձանց՝ երաշխավորելու, որ նրանք հանդիսանում են զարգացմանն ուղղված պաշտոնական օգնության և՛ դերակատարները, և՛ շահառուները: Ֆինանսավորման առաջնահերթ ոլորտները, ինչպես նաև՝ կարողությունների զարգացման և ուսումնասիրությունների հիմնական ոլորտներն առանձնացնելիս Պետությունները պետք է հաշվի առնեն նշված անձանց փորձառությունը: Սույն զեկույցի հիմքում ընկած նյութերում ներկայացվում է հաշմանդամություն ունեցող անձանց ընդգրկող խորհրդակցական ֆորումների կամ ազգային համագործակցության գործակալություններին կից աշխատանքային խմբերի հիմնման արդյունքում հավելյալ ներդրումը:

97. Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ հստակ հղումներ պարունակող Կայուն զարգացման նպատակների ընդունումը հիանալի հնարավորություն է ընձեռում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության խթանման գործում միջազգային դոնորների համակարգված ներգրավվածությունն ապահովելու առումով: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան և Կայուն զարգացման 2030թ. օրակարգը փոխլրացնում են միմյանց և պետք է փոխադարձաբար ամրապնդվեն՝ հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք ներգրավումը և մասնակցությունը երաշխավորելու համար:

98. Միջազգային համագործակցության կառույցները պետք է անմիջական աշխատանք տանեն և աջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպություններին և պետք է ուսումնասիրեն ֆինանսավորումը մեծացնելու հնարավորությունները՝ նշված ներգրավվածությունը և աջակցությունն ապահովելու համար: Վերջին տարիներին շատ դոնորներ նվազեցրել են իրենց գործունեության տարածաշրջանների և երկրների թիվը՝ դրանով իսկ բացասական ազդեցություն գործելով միջին եկամուտ ունեցող երկրներում գործող հաշմանդամություն ունեցող անձանց կազմակերպությունների վրա: Բացի այդ, ֆինանսավորումը շատ դեպքերում տրամադրվում է պայմանով, որ դրանք ստացող կազմակերպությունները պետք է որոշ տոկոսի չափով համաֆինանսավորում ապահովեն որևէ այլ աղբյուրից: Հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպություններից շատերը չեն կարողանում կատարել այս պահանջը և այդ իսկ պատճառով չեն կարող օգտվել նման օգնությունից: Դոնորները պետք է հաշվի առնեն այս գործոնը և իրենց ներկայացրած պայմաններում դրսևորեն ճկուն մոտեցում:

V. Եզրակացություններ և հանձնարարականներ

99. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական և հասարակական կյանքին այլոց հետ հավասար հիմունքներով մասնակցելու իրավունքը ներառում է որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունքը: Այդ իրավունքի իրացումը կարևոր պայման է հանդիսանում Կայուն զարգացման նպատակների մշակման և իրականացման նկատմամբ մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցում մշակելու համար: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայով ապահովվում է ամուր շրջանակ՝ հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների՝ հասարակական և քաղաքական կյանքին մասնակցությունը, ինչպես նաև հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացին նրանց ակտիվ ներգրավումը և մասնակցությունը երաշխավորելու համար: Պետությունները պետք է նշված պարտավորությունները դիտարկեն որպես պատշաճ և արդյունավետ կառավարման համակարգն ամրապնդելու և հաշմանդամություն ունեցող անձանց գործունեության և կարողությունների շրջանակը մեծացնելու հնարավորություն:

100. Հաշմանդամություն ունեցող անձանց՝ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունքի իրացման գործում մասնակից պետություններին աջակցելու համար Հատուկ զեկուցողը ներկայացրել է հետևյալ հանձնարարականները.

ա) ներպետական օրենսդրությամբ ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց՝ քաղաքական և հասարակական կյանքին, այդ թվում՝ հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացին այլոց հետ հավասար հիմունքներով մասնակցելու իրավունքը,

բ) նպաստավոր միջավայր ստեղծել հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հիմնման և գործունեության համար և այդ նպատակով ձեռնարկել հատկապես հետևյալ միջոցները.

(i) բարենպաստ քաղաքականություն ընդունել նշված կազմակերպությունների հիմնման և կայուն գործունեության համար,

(ii) երաշխավորել նշված կազմակերպությունների ինքնավարությունը և պետությունից անկախությունը,

(iii) աջակցել նշված կազմակերպությունների կարողությունների զարգացմանը,

(iv) ապահովել ֆինանսավորման մեխանիզմների, այդ թվում՝ պետական ֆինանսավորման և միջազգային համագործակցության մատչելիությունը,

գ) ընդունել այնպիսի օրենքներ, որոնք պետական մարմիններին կպարտավորեցնեն սերտորեն խորհրդակցել հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ երեխաների և կանանց հետ, նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների միջոցով ինչպես նաև ակտիվորեն ներգրավել նրանց իրենց ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերող օրենքների և քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում: Պետությունները պետք է մշակեն ֆորմալ մեխանիզմներ և իրավական պաշտպանության միջոցներ՝ այս պահանջին չհամապատասխանող որոշումները վիճարկելու համար,

դ) աշխատանք տանել հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների հետ և ապահովել հասարակական կյանքին առնչվող, և մասնավորապես՝ բռնության և սեռական բռնության վերաբերյալ օրենսդրության կամ քաղաքականության մշակման ոլորտում որոշումների կայացման գործընթացում նրանց անմիջական մասնակցությունը՝ ապահովելով, որ այդ մասնակցությունը և խորհրդակցությունն անցնեն անվտանգ միջավայրում,

ե) ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունների մասնակցությունը Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիային ներպետական օրենսդրության համապատասխանեցման բոլոր գործընթացներին, ինչպես նաև ազգային մակարդակով դրա իրականացման և մշտադիտարկման գործընթացին,

զ) ակտիվորեն ներգրավել և սերտորեն խորհրդակցել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց շահերը ներկայացնող կազմակերպությունները պետական բյուջեի կազմման գործընթացում և պետությունների միջև միջազգային համագործակցության մեջ,

է) երաշխավորել բոլոր կառույցների, ինչպես նաև՝ հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման գործընթացի և խորհրդակցության ընթացակարգերի և տեղեկատվության մատչելիությունը,

ը) հասարակական կյանքին առնչվող որոշումների կայացման և խորհրդակցության հետ կապված բոլոր ընթացակարգերի շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց ապահովել ողջամիտ պայմաններով,

թ) ընդունել ռազմավարություններ՝ ապահովելու որոշումների կայացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը և այդ մասնակցությունը խթանելու համար ապահովել հաշմանդամությանը և տարիքին համապատասխան աջակցություն,

ժ) խրախուսել և աջակցել անապահով խմբերից, մասնավորապես՝ իրենց ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային, էթնիկական, բնիկ կամ սոցիալական ծագման, գույքային դրության, ծննդյան կամ այլ հիմքով խտրականության ենթարկվող հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը,

ի) աջակցել միջազգային մակարդակով որոշումների կայացման գործընթացներում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը:

101. Հատուկ զեկուցողը հանձնարարել է, որ միջազգային համագործակցության մարմիններն անմիջապես աշխատանք տանեն և աջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց շահերը ներկայացնող կազմակերպությունների հետ:

102. Հատուկ զեկուցողը հանձնարարել է նաև, որ Միավորված ազգերի կազմակերպության ողջ համակարգը շարունակի ջանքեր գործադրել միջազգային մակարդակով բոլոր որոշումների կայացման և մասնավորապես՝ Կայուն զարգացման նպատակների իրականացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը խթանելու ուղղությամբ: